



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳՐ. ՔԱՅԱՆԱՅ ՊԵՏՐՈՎ

ԿԱՆ-Ր ՀԱՅԿԱՅԻԿ  
Ա.Ի.ԵՏԱՐԱՆԸ

ԻՐԻՆ ԾԵՐ ԿԵԱՆԻՆ ՀԻՄՔԸ

(Գրծատուած)

Թ.պրգճ. Հ. Քելեկեան



Ա.ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԵՎԵՏԻՊՆՅԱՆ ՏՊԱՐԱՆ  
1903

ԿՆՆՆՆ) ԵՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ) ԿՆՆՆՆ)

22  
7-50

23 SEP 2009

220

609-76

ԳՐ. ՔԱՅԱՆԱՅ ՊԵՏՐՈՎ

22 145

7-50

# Ա. Ի. ԵՏԱՐԱՆԸ

ԻՐԻՆԻ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՔԸ

(Գրծատուած)



Թ. Կ. Զ. Բ. Լ. Գ. Ը. Կ. Ը. Կ. Ը.

1004  
84748  
197481

1004  
84748  
197481



ՏՊԱԳՐՈՒՄՎ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆ ԷՂԲԱՐՅ ԾԱԽՔՈՎ



Ս.-ՊԵՏԵՐԱՌԻՐԳ  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԿԻՎՏԻՊ» ՏՊԱՐԱՆ  
1903

22.07.2013

4088

022

110-100

Доз. цензурою. С.-Петербургъ, 17-го Октября 1903 года.

ԱԶՆՈՒՍՍԻՐՏ ՈՒ ԲԱՐԵՊԱՇՏ

ԴԱՆԻԷԼ ԱՂԱ ՅՈՒՆԱՆԵԱՆԻ

ԲԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



Ա.

**ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԳԼՍԱԽՈՐ ՀԻՄՈՒՆՔԸ**

Ժամանակակից Եւրոպական քաղաքակրթութիւնը իւր բնաւորութեամբ՝ պաշտօնապէս քրիստոնէական է համարվում. Գրիստոսի վարդապետութիւնն ընդունվում է իբրև բարձրագոյն ճշմարտութիւն, իբրև հիմք հոգեկան զարգացման. Աւետարանի վարդապետութեան տրվում է առաջնակարգ նշանակութիւն մեր անձնական, ընտանեկան և հասարակական կեանքի մէջ:

Բայց իրականութիւնը շատ հեռու է մեր սպասածից. Ժամանակակից հասարակութեան մէջ սովորական երևոյթ է դարձել անտարբերութիւն, սառնութիւն և մինչև անգամ արհամարհանք ցոյց տալ դէպի կրօնը:

Աւետարանի վարդապետութեան գլխաւոր ծրարքերը ազաւաղվում են և այլապէս բացատրվում. քրիստոնէական բարոյականի բարձրագոյն պահանջ-

ներն անտես են առնվում էբրև ցնորք, իբրև անբրազործելի երազունք:

Սրա հետ միասին՝ առաջ են դալիս բազմաթիւ առաջնակարգ նշանակութիւն ունեցող երեւոյթներ, ձևակերպվում է կեանքի համար մի նոր կազմ՝ կրօնի ազդեցութիւնից բոլորովին անկախ, որը միանգամայն բնական ու բնական է համարվում:

Կեանքի նոր կազմակերպութեան կուսակիցները մինչև անգամ հաստատապէս պնդում են, թէ Քրիստոսի հաստատած կրօնի ժամանակը անցել է. թէ նրա վարդապետութիւնը իւր վերջին խօսքը արդէն ասել է, թէ Աւետարանի բարոյականը կարող էր զոհացնել միմիայն դալիլիայի միամիտ ձրկնորսներին, այն ինչ ժամանակիս լուսաւորեալ Եւրոպացուն հարկաւոր են ուրիշ առաջնորդող սկրզբունքներ, որ կարող է տալ և տալիս է մի միայն գիտութիւնը:

Գիտութիւնը, ասում են նրանք, մի փարոս է, որի պայծառ լոյսի առաջ նսեմանում է կրօնի լոյսը, և վերջապէս պէտք է բոլորովին խաւարի: Կրօնի լոյսը շատ անգամ է խաւարել սնապաշտութեան ամպերից. շատ անգամ է բորբոքուել փանատիկոսութեան չարագոյժ բոցով և եղբայրասպան ու անողոք կռիւների պատճառ դարձել. բաւական է յիշել բարթուղիմէոսեան զիշերը, ինկուիլիցիայի տանջանքներն ու խարոյկները, որ մարդս օրհնէ ու փառք տայ

զիտութեան, որ մարդկութիւնը այսպիսի արհաւիրքներից փրկեց:

Ի՞նչ պատասխան տանք այդպիսի խօսքերին:

Նախ և առաջ երբ քննադատում ենք մի որ և է կրօն, մանաւանդ քրիստոնէականը, իւր բարձրութեան ու նշանակութեան կողմից, միշտ պէտք է որոշենք նրա հիմնական դադափարը առօրեայ իրականութիւնից, չխառնենք երբեք ինչ որ կայ նրա հետ, որ պէտք է լինէր:

Մարդիկ իրանց կարճ խելքովն ու փանատիկոսութեամբ կարող են ամէն մի բարձր դադափար պղծել ու այլանդակել, բայց այդ չի՛ նշանակում, թէ դադափարը ինքնրստինքեան ցած ու այլանդակ է:

Ոչ ոք չի՛ պնդիլ թէ ադատութեան դադափարը վատ դադափար է՝ ի նկատի առնելով անարխիստների անմիտ չարագործութիւնները. այսպէս և քրիստոնէութիւնը կարող չէ մեղաւոր համարուիլ Լոյոլաների ու Իորկուեմադաների չարագործութեանց պատճառով:

Ռօուն իւր հետաքրքրական գրքուկի մէջ— «Քրիստոնէութեան ակներև ճշմարտութիւնները»— հետևեայն է ասում. «Եկեղեցուն պատկանող հաւատացեալների մէջ յաճախ թանձր սնապաշտութիւն է տիրել. եկեղեցին սրբազործել է այնպիսի սրարքներ, որ դատապարտել է նրա հիմնադիրը. նա մինչև անգամ—սարսափելի է խոստովանելը—սուր է

բարձրացրել, որը Քրիստոս շատ որոշ կերպով հրա-  
ձայեց պատեանի մէջ դնել: Այս բոլորը ճշմարիտ է.  
բայց զարմանալին այն է, որ եկեղեցին իւր Հիմնա-  
դրի անձի մէջ գտել է մի յաւիտենական Հիմունք  
իւր վերածնութեան համար: Քրիստոսի անձի ու  
վարդապետութեան մէջ կայ մի տեսակ խոր իմաստ,  
որ՝ այսպէս ասենք, բարձր է եղել բոլոր դարերի  
Երևութական քրիստոնէութիւնից:

Քրիստոնէութեան Հիմնադրի կեանքի պարզ  
նկարագրութիւնը, որ տուել են մեզ աւետարանիչ-  
ները, առանց այն կեղծ գծերին որ մարդկային ան-  
մտութիւնը կամ չար կամքը միացրել է այդ պատ-  
կերին, միշտ եղել է և պիտի լինի եկեղեցու կեան-  
քի վերանորոգման աղբիւր. այս է քրիստոնէութեան  
բնորոշ յաակութիւնը»:

Կրօնական պատերազմները, աղանդաւորների  
միահամուռ կոտորուելը, ինկուիզիեայի խարոյկները  
— սրանք փրկչի վարդապետութեան բնական հետե-  
ւանքները չեն. ընդ հակառակն՝ կոպիտ ու սոսկալի  
աղաւաղումն են, ծանր վիրաւորանք ու անարգումն  
են աշխարհիս համար խաչուած Աստուածորդու ա-  
մենաներոզ սիրոյ վարդապետութեան:

Քրիստոնէութիւնը իբրև կրօն՝ ոգևորուած  
լինելով Հեղութեան, սիրոյ ու սղորմածութեան ոգ-  
ւով, ատելով ատում է ամէն տեսակ բռնութիւն,  
յանուն Աստուծոյ, որը՝ ինչպէս Յովհաննէս աւե-

տարանիչն է ասում, Սէր է (ա. Յովհ. գ. 16): Երբ  
դիւրագրգիռ ու եռանդնոտ Յակովբոսն ու Յովհան-  
նէսը բարկանալով սամարացիների վրայ, որ իրենց  
վարդապետին անհամարհել էին, ասացին. «Տէր,  
կամեն՞ում ես ասենք, որ կրակ իջնի երկնքից և այ-  
րէ նրանց, ինչպէս Եղիան արաւ», Յիսուս արգելեց  
և ասաց «Չգիտէք թէ ի՞նչ ոգու էք (պատկանում),  
որովհետև Մարդոյ Որդին եկած է ոչ թէ ողիներ  
կորուսանելու, այլ նրանց փրկելու համար»:

Աւետարանի այս խօսքերից յետոյ կարծեմ  
աւելորդ է բացատրել, թէ քրիստոնէութիւնը ինքն  
բատ ինքեան կարող չէ մեղաւոր համարուել այն  
չարիքների ու անմտութիւնների համար, որ դոր-  
ծել են նրա սուտ և ինքնակոչ բարեկամները, բը-  
թասիրտ փանատիկոսները:

Անաչառութեամբ կռուեցէք Աւետարանի վար-  
դապետութեան նշանակութիւնը 19 դարերի պատ-  
մութեան ընթացքում և դուք կրղմայէք, թէ նա  
որքան շատ բան է արել մարդկութեան համար.  
ինչպիսի անչնչելի հետք է թողել մեր ամբողջ քա-  
ղաքակրթութեան, մեր բարքերի, սովորութիւնների,  
օրէնսդրութեան, գիտութեան և արուեստների  
վրայ. որքան խոր կերպով փոխել ու աղնուացրել  
է մարդկութիւնը, որքան կարեկցութիւն, գթու-  
թիւն է մտցրել մեր կեանքի մէջ: Մելիոնաւոր մար-

դիկ նրանից ոյժ ու կարողութիւն են ստացել ապրելու յանուն բարւոյ ու արդարութեան:

Միթէ այժմ է միայն կտրուել նրա կենդանացուցիչ ոյժը. այժմ է յամաքել այն աղբիւրը, որ յագեցնում էր հարիւրաւոր սերունդների հոգեկան ծարաւը, և Աւետարանի տեղ դիտութիւնը պիտի բռնէ:

Կարո՞ղ է արդեօք դիտութիւնը փոխարինել կրօնը, իբրև մարդկութեան առաջնորդ դէպի ապագայի պայծառ հեռաստանը. այս մի շատ լուրջ խնդիր է, և վայրիվերոյ լուծելը՝ յանցանք. սխալը կարող է շատ վտանգաւոր հետեանքներ ունենալ:

Տիեզերական կեանքը իւր զանազանակերպ երևոյթներով ու կողմերով ներկայացնում է մի ընդհանուր, աստիճանաբար զարգացման, թէ և դանդաղ, պատկեր. երևան են զալիս այն ծածուկ զօրութիւնները, որ թաքնուած են նոյն իսկ բնութեան մէջ:

Ինչպէս վերեր, տիեզերքի անեզր տարածութեան մէջ հանդած արեգակների փոխարէն վառվում, բորբոքվում են նոր արեգակներ, նոյնպէս էլ մարդկային սրտի ամենախոր անկիւններում հնացած, իրականացած նպատակների փոխարէն ծնվում, յառաջանում են նոր իդէալներ:

Կուլտուրական կեանքի նախնական ժամանակներում մարդուս բոլոր ուշադրութիւնը արտաքին

աշխարհն էր զրաւում: Արտաքին բազմատեսակ տպաւորութիւնների տակ ընկճուած՝ մարդկային փիլիսոփայական հանձարը, բանականութիւնը առաջին նուազ շատ քիչ է զգում ու հասկանում իւր անհատականութիւնը, իրան չի զատում շրջապատող բնութիւնից. մաքի հետաքրքրութիւնը բացառապէս ուղղուած է տիեզերքի էութեան խնդրի վրայ:

Յունաց փիլիսոփայութիւնը՝ Թադէսից սկսած մինչև Սոկրատը, աշխատում է լուծել աշխարհի էութեան հարցը. ինչի՞ց է բաղկացած ամենայն ինչ, ինչի՞ց է առաջ եկած, ինչո՞ւ է կերպարանափոփում—ահա հին աշխարհահայեցողութեան հիմնաւոր առարկան: Զուրը, օդը, կրակը, անսահման նիւթը, երբեմն մէկը, երբեմն էլ միւսը, բնութենվում է փոփոխական երևոյթների իբրև անփոփոխ հիմք: Այս հարցը բազմակողմանի կերպով զննելուց յետոյ՝ փիլիսոփայութիւնը նոր ու աւելի դժուար խնդիր է դնում իւր առաջ և իւր ուշադրութիւնը զարձնում է մարդկային բնութեան վրայ:

Մարդկային հանձարի պատմութեան այդ նոր դարազուլը բացուեցաւ Սոկրատի շնորհիւ. նա էր առաջինը, որ փիլիսոփայութեան ուշադրութիւնը բնագիտական աշխարհից դարձրեց դէպի հոգեկան աշխարհը:

Սոկրատից առաջ փիլիսոփայութիւնը ուսուցանում էր. «ճանաչիր քեզ շրջապատող արտաքին»

աշխարհը): Սովորաբար սկսաւ ուսուցանել. «Ճանաչի՛ր ինքդ քեզ»: Սյդ մի մեծ առաջընթաց քայլ էր, բայց իսկոյն և եթ սպասել խնդրի ամբողջովին լուծման անկարելի էր:

Ս.մէն ինչ դալիս է իւր ժամանակին, և փիլիսոփայական հանձարն անգամ ոստիւն կարող չէ անել: Սովորաբար խորասուզուելով իւր հոգեկան կեանքի բնութեան մէջ, կարող էր նրա մէկ կողմը միայն նկատել, այն է իմացականութիւնը. սրտի բարդ ու խոր կեանքի մասին նա դադափար չունէր, կարծելով թէ մարդիկ չար ու ստախօս են տգիտութեան պատճառով: «Ով որ իսկապէս ըմբռնել է գեղեցիկը, այնպիսին նրա համաձայն կը գործէ», ասում է Սովորաբար:

Լաւ էր եթէ այդպէս լինէր, բայց դառն փորձը մեզ միշտ համոզում է, թէ առաքինութեան տեսական ըմբռնման և առաքինական կեանքի մէջ տեղը ահագին ու հեռաւոր ծանապարհ է ընկած: Բաւական չէ բարձր մտածողութիւն ունենալ, բարւոյ նշանակութիւնը պարզ հասկանալ, հարկաւոր է նաև դաստիարակուած կամք, որը միայն կարող է մեր գաղափարներն իրականացնել:

Սովորաբար տեսակէտով առաքինութիւնը ներկայանում է մարդկային բնութիւնից զուրս մի արտաքին բան. նա կարծում էր, թէ առաքինութիւնն

էլ կարելի է այնպէս սովորել, ինչպէս թուարանութիւնը, կարգալն ու զրելը և այլն:

Նարցի նորութեան պատճառով Սովորաբար չէր կարող իսկոյն և եթ ըմբռնել, թէ առաքինութիւնը ներքին մտատանջութեան պտուղ է, կոպիտաբնորոշ ընդունելի հետ անխոնջ կերպով մաքառելու հետեանք է. դարեր էին հարկաւոր, մինչև որ մարդկութիւնը այդ ճշմարտութիւնը հասկանար:

Ուրեմն, չին մարդկութեան ուշադրութիւնը դարձած էր զլիսաւորապէս դէպի արտաքին աշխարհը, և անհատի բարձր նշանակութիւնը դեռ չէր հասկացուած. այն աշխարհահայեցողութեան համեմատ չին ազգերի բարոյականն ևս զուտ արտաքին ձև ունէր:

Չին քաղաքակրթութեան ամենապայծառ արտայայտողներն են Յունաստանն ու Հռովմը, այսպէս կոչուած անտիք աշխարհը, և մենք տեսնում ենք, թէ հոգեկան աշխարհի վերաբերեալ բազմատեսակ հարցեր նրանց համար զոյութիւն չունին. մարդու արժանաւորութեան, անհատի իրաւունքների, ազգերի եղբայրութեան և այլ սրանց նման հարցեր, եթէ երբեմն երբեմն քննուել են, միշտ հարեանցի ու վերի վերոյ են քննուել և երբեք առաջին տեղը չեն բռնել:

Անտիք աշխարհի վերջնական նպատակը միշտ եղել է մարմնական գեղեցկութեան երկրպագութիւ-

նր և մարմնական ուժի պաշտամունքը. Յոյնը երկրպագում է մարմնի գեղեցկութեան և միայն նրան. Յունաց դիցաբանութիւնը լիքն է Ողիմպական աստուածների պէսպէս տափական ու անպարկեշտ արկածներով, այն ինչ նրանք (նրանք) արտաքին կողմից անչափ կատարեալ են:

Հռովմայեցիին արուեստագէտ չէր. նա գեղարուեստը առօրեայ կեանքի զարդարանք էր համարում: Ուժեղ ու պնդակազմ լինելով՝ ոյժը գեղեցկութիւնից նա բարձր էր դասում: Նրա կարող բազուկի տակ խոնարհեցան ամենահեռաւոր ազգերը, և Հռովմը ընդարձակվում, հարստանում էր և շքեղանում յաղթուած ու նուաճուած ազգերի բարօրութեան դնով: Հռովմը—տիեզերքի մայրաքաղաք. նրա փառքը, ոյժը—ահա այն իդէալը, որով ապրում էր, և որի համար ամէն ինչ զոհում էր հին Հռովմայեցիին:

Իսպառ այդ երկու գաղափարներն ևս՝ թէ՛ մարմնական գեղեցկութիւնը և թէ՛ բազուկի կարողութիւնը, վերջապէս իրագործուած էին. Ակրոպոլիսը փայլում էր սքանչելի գեղեցկութեամբ. Հռովմի խօսքը օրէնք էր երկրի ամենահեռաւոր անկիւնների համար:

Ի՞նչ գաղափարով ապրէր այսուհետև հին աշխարհը, մի նոր գաղափար որ հզօրապէս ոգևորէր ժողովուրդը, չէր երևում. հինը արդէն հսացած էր.

բայց առանց ոգևորիչ գաղափարի, լինի դա մինչև անգամ ցած գաղափար, մարդս կարող չէ ապրել. ժողովրդի կարողութիւնը չլատվում է և հասարակութիւնը ոչնչանում: Տին անտիք յոյն-հռովմեական աշխարհը չէր կարող այլ ևս իւր կեանքը շարունակել: Հասաւ վերջապէս այն ժամը, երբ Հռովմի բարոյական խախուտ հիմունքը տապալուեցաւ և հռովմեական պետութիւնը իւր զոյութիւնը վերջացրեց: Նա տապալուեցաւ և պէտք է ապալուէր, որովհետև նրան ոգևորող գաղափարները ժամանակաւոր էին, և երբ նրանց ոյժը սպառուեցաւ, Հռովմն էլ զրկուեցաւ սննդից:

Թառամած մարմինը վերանորոգելու համար նոր ոյժ պէտք էր ներշնչել: Մարդկութեան հոգեկան կեանքի համար նոր սկզբունքներ հարկաւոր էին: Տին աշխարհի բեկորների վրայ կարող էր ծրնուել ու ծաղկել նոր քաղաքակրթութիւն, միայն թէ նոր գաղափար էր հարկաւոր. և ահա տեսնում ենք, որ այդ նորածին քաղաքակրթութիւնը նոր գաղափարների հիման վրայ է սկսվում:

Տին աշխարհը երկրպագում էր մարմնի գեղեցկութեան և բազուկի կարողութեան, նոր զարուս մարդիկ որոնում են հոգու գեղեցկութիւն և բարոյական ոյժ:

Մարդկային ոգին ընդունվում է իբրև աղբիւր հասարակական, քաղաքական և պատմական կեան-

քի: ճատարակութեան զլիսաւոր նպատակն է դառնում մարդկային սրտի ազնուացումը, բարոյական կատարելագործութիւնը, անհատի հոգեկան զարգացումը. մնացեալը երկրորդական և աննշան է համարվում. «խնդրեցէք նախ և առաջ Աստուծոյ արքայութիւնն ու ճշմարտութիւնը, և մնացեալը կաւելնայ Ձեզ, կրգայ ինքն ըստ ինքեան» ասում է Աւետարանը:

Աստուծոյ արքայութիւն ասելով՝ այստեղ հասկացվում է կատարեալ կեանք երկրիս վրայ, որ հիմնուած է ոչ թէ բռնութեան, անսանձ եսասիրութեան, այլ ընդհանուր սիրոյ, կատարեալ ճշմարտութեան վրայ: Այդ արքայութիւնը իրագործուելու համար պահանջում է, որ մարդկային բնութիւնը վերածնուի, նրա ներքին գոյութիւնը վերանորոգուի: «Ճշմարիտ եմ ասում քեզ, ասաց Յիսուս Նիկողիմոսին, մինչև որ մարդ ի վերուստ չճնուի, չի կարող տեսնել Աստուծոյ արքայութիւնը» (Յովհ. Գ. 3): Մի ուրիշ տեղ Յիսուս ասում է. «Աստուծոյ արքայութիւնը չպիտի գայ յայտնի նշաններով, և չպիտի ասեն, ահա այստեղ է կամ այնտեղ, որովհետև Աստուծոյ արքայութիւնը Ձեր ներսն է:

Ահա նոր գաղափար, ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական: Հռովմի ու Յունաց գաղափարները անցողական էին, ուստի և հին Յունաստանն ու Հռովմը ընկան. նոր քրիստոնէական գաղափարը



անհուն, անեզր է. «Եղէք կատարեալ, ինչպէս Ձեր երկնաւոր հայրը կատարեալ է» (Մաղթ. Ե. 33):  
 ահա Փրկչի կտակը մարդկութեան:

Մեր աչքի առաջ է այժմ քրիստոնէութեան համարեա երկհարամեայ պատմութիւնը. մեր հայեացքը կարող է այժմ ըմբռնել ու գնահատել նրա ներքին զարգացման էութիւնը, նրա կարող ազդեցութիւնը մարդկութեան խղճի ու կենցաղավարութեան վրայ. մենք կը տեսնենք, որ քրիստոնէութիւնը դեռ ևս չէ արտայայտած իւր ամբողջ պարունակութիւնը, չէ ասած իւր վերջին խօսքը: Աստուծոյ արքայութիւնը իրագործելու համար երկրիս վրայ՝ հարկաւոր է, որ մարդկութիւնը դեռ ևս երկար ու անխոնջ աշխատի իւր սրտի բարոյական դաստիարակութեան ու կատարելագործութեան համար:

Աւետարանը մարդոց սրտի մէջ շատ բարի զգացումներ առաջ բերեց. նրա թաքուն լարերը լարեց, և նրանցից դուրս բերեց սքանչելի զեղեցիկ հրնչիւններ, որոնք դեռ ևս չեն հիւսուել և չեն կադմել յաղթանակող սիրոյ դիւթիչ մեղեդի:

Եթէ զիտութիւնը ուղղում է կրօնը փոխարինել, նա պարտական է իւր վրայ առնել նրա բոլոր պարտականութիւնները և պէտք է մարդկութեան ձեռքը տայ աւելի հզօր միջոցներ, քան թէ կրօնը, պէտք է ցոյց տայ կեանքի վերջնական նպա-

տակներն իրագործելու աւելի կարձ ճանապարհը: Եւ զհառութիւնը զոռոզութեամբ իրան ընդունակ է համարում այդ ամէնը իրագործելու. նա հանդիսապէս աւետում է, թէ միայն ինքը կարող է մարդկութիւնը փառաւոր ապագայի հասցնել:

Բայց ով որ այգիսի դատողութիւններ է աւտում, նա հաստատում է, թէ չի հասկանում մարդու սիրտը, չի հասկանում թէ ի՛նչ է գիտութեան նրպատակը, և թէ ի՛նչ կարող է տալ: Գիտութեան ասպարէզը ընդարձակ է. եթէ կամենաք անեղր է. նրա նպատակն՝ ըր լայնածաւալ են, նա այնքան օգուտ է տուել մարդկութեան և դեռ այնքան պէտք է տայ, որ նրա անունը մինչև անգամ սրբազան պէտք է համարուի բանական մարդու համար:

Այնու ամենայնիւ յառաջադիմութեան մղող յոժր բանականութիւնը չէ և միայն մտքի զարգացումը բարբերը չէ բարեօրում: Գիտութիւնը ընդլայնում է մարդու մտաւոր աշխարհը, զարգացնում է նրա խոհականութեան յոժր, ընդարձակում է նրա տիրապետութեան սահմանը բնութեան վրայ, բայց մարդուն հոգեպէս վերածնել, բարոյապէս բարձրացնել նա կարող չէ առանց կրօնի աշակցութեան:

Մարդկային սիրտը ալեկոծված է միևնոյն տաղնապներով, թէ առաջնակարգ փելիսոփայինը և թէ յետին մշակինը: Գալիլիայի հասարակ ձկնորսը կարող է աւելի բարձր լինել տասնեակ իմաստուն-

ներից, զհառութեան լուսատուներից: Համեմատեցէք օրինակի համար Բէկոն Վերուլամացու—փորձական գիտութեան հօր բարոյական տիպարը այն սեւամորթ մշակի հետ, որ նկարագրուած է «Թովմաս եղբօր անակի» մէջ, և դուք կը համոզուիք որ կրթութիւնը կարող է միայն ձևակերպել չարիքը, նրան աւելի նուրբ դարձնել, բայց ոչնչացնել նա չի կարող: Ուստի և զհառութիւնը անկարող է մարդու Աստուծոյ արքայութեան հասցնել: Բայց թերև՞ս գիտութիւնը ուրիշ միջոցներով կարող է մարդկութեան փայլուն ապագայ պատրաստել:

Գիտութիւնը՝ քննելով այն օրէնքները, որոնցով գոյութիւն ունի տիեզերքը, ուսումնասիրելով այն յոժերը, որոնք հաստատուած են բնութեան մէջ, տալիս է հզօր կարողութիւն իշխելու բնութեան երևոյթների վրայ: Կար ժամանակ, երբ մարդը վախենում էր բնութեան ամէն մի հզօր երևոյթից. այժմ ինքը նրանց աէրն է. Գիտութիւնը թամբել է ալիքները, սանձել է անսանձ քամին, իշխում է արեգակին, կայծակին. ազամանդեայ գայլիկոնները լեռներ են ծակում, անապատին ջուր մատակարարում. վիթխարի մուրճերը հեշտութեամբ տափակացնում են մետաղի կոյտերը, հեռագիրը, հեռախօսը, հերազիտակը ոչնչացրել են տարածութիւնը. որոշուած է հեռաւոր մոլորակների քիմիական կազմութիւնը և այլն և այլն:

Բայց չնայելով մարդկային հանճարի այս յաղթանակներին՝ Աւետեաց երկիրը իբրև ստուեր դարձեալ փախչում է մեղանից: Ժողովրդի ստուար խաւերի խոր տղխտութիւնը, անխոնջ աշխատանքը, ահռելի աղքատութիւնը՝ շքեղութեան ու շուայլութեան մօտ.— այս բոլորը մեր ներկայ շոգու և ելեկարականութեան դարում նոյնքան զգալի կերպով են արտայայտուում, ինչպէս և բարբարոսութեան դարերում: «Անկեղանոցներն ու բանդերը զիանական յառաջադիմութեան նոյնպէս ուղեկցում են, ինչպէս պալատներն ու հրասքանչ խանութները» ասում է չենրի ծորձ:

Մարդաշատ մայրաքաղաքներում, ասֆալտով յատակած ու ելեկարական արեգակներով պայծառացած փողոցներում նոյնպէս պատահում ենք վհատած, յոգնած ու զրգռուած դէմքեր, ինչպէս և ամէն տեղ: Անհուն հարստութիւններին կից մարդիկ անօթի մեռնում են, և հիւանդ երեխաները իզուր են ծծում իրանց մօր ցամաքած ստինքը: Հարստութիւն զիզելու ծարաւը և մամոնայի երկրպագութիւնը, որ ամէնուրեք տարածուած է, ցոյց է տալիս, թէ մարդիկ նիւթական կարօտութիւնից արքան վախենում են: Աւետարանի մեծատան ու Ղաղարոսի առակը մինչև այժմ էլ չէ կորցրած իւր սրտածմբիկ բովանդակ նշանակութիւնը»:

«Աղքատութեան ու հարստութեան այս կա-

պակցութիւնը, ասում է չենրի ծորձ, մեր ժամանակի ամենամեծ խնդիրն է. այն կեդրոնական հանդոցն է, որից առաջ են դալիս արգիւնաբերական, հասարակական և քաղաքական բոլոր դժուարութիւնները և աշխարհս կաշկանդում. դրանց դէմ իզուր են մաքառում պետական անձինք, մարդասէրներ ու մանկավարժներ: Սյդ հանդոցից առաջ են դալիս այն ամպերը, որոնք խաւարեցնում են ամէնից յառաջադէմ, ամէնից անկախ ազգերի ապագան: Սյդ մի հանելուկ է, որ ճակատադիրը դըրել է ժամանակիս քաղաքակրթութեան առաջ և այդ հանելուկը լուծել նշանակում է ոչնչանալ: Քանի որ հարստութիւնները պէտք է դիզուին, և շուայլութիւնը զարգանայ, և լիութեան ու կարօտութեան մէջ եղած խորխորատը աւելի ու աւելի բացուի, մինչև այն ժամանակ՝ յառաջադիմութիւնը կարող չէ իսկական ու հաստատուն համարուիլ»:

Պէտք է փոփոխութիւն լինի. հարկաւոր է քաղաքակրթութեան մղող ոյժերը վերանորոգել. մեր կեաքի մէջ գիտութիւնից զատ ուրիշ տարերք էլ մտցնել: Գիտութիւնը, որ խոստացել էր մի միայն իւր ուժերով բարձրագոյն ճշմարտութեան ու հաւասարութեան թաղաւորութիւնը հաստատել երկրիս վրայ, հէնց այս իսկ կողմից պէտք է սրնանկացած համարուի:

Մարդիկ փոխանակ միանալու և երկնքի ա-

առանորդութեամբ ընդհանուր թշնամու—խաւարի  
 —դէմ պատերազմ մղելու՝ գիտութեան զբօշակը  
 ձեռներին մաքառում են միմեանց հետ աւարի հա-  
 մար: Ամէնօք աշխատում է միւսին կուլ տալ, ոչըն-  
 չացնել: Իւրաքանչիւր ոք աշխատում է իրեն համար  
 միայն. տիրած է ընդհանուր թշնամութիւն. մար-  
 դիկ միմեանց չեն հաւատում, միմեանց վրայ զայ-  
 րացած, գրգռուած են. չկայ արդարութիւն, չկայ  
 հանգստութիւն, զթուութիւն, սէր: Հակառակորդը  
 ընկնում է, աւելի ևս լաւ. մաքառման շնորհիւ կա-  
 տարելագործվում է յեղը: Գթութիւնը յանցանք է,  
 որովհետեւ հղօրներին զոհում է թոյլերի համար. հոգ-  
 վով ու մարմնով հարուստներին՝ ծոյլերի ու արկար-  
 ների համար. տիեզերքը, ասում է գիտութիւնը, առաջ  
 է գնում խիստ, անգութ մաքառման օրէնքի շնորհիւ:

Բայց ո՞ր է գիտութեան խոստացած երջան-  
 կութիւնը մարդկութեան բոլոր անգամներին, ո՞ր-  
 տեղ է բարձրագոյն, գաղափարական սիրոյ և ար-  
 դարութեան յաղթանակը. ո՞ր է ընդհանուր անե-  
 սասիրութիւնը. ինչո՞ւ գիտութիւնը նիւթական յա-  
 րաչաղիմութեան հետ մեղ չի բերում բարքերի  
 բարւոքում, ինչո՞ւ չարութիւնը բոլորովին արմա-  
 տախիլ չի անում. աւա՞ղ, այս նրա գործը չէ: Չա-  
 րութեան պատճառները բարոյական են և գիտու-  
 թիւնը անգոր է բարոյական չարութեան դէմ: Նա  
 կարող է ժայռեր տապալել, մետաղի վիթխարի գան-

դուածներ տափակացնել, բայց բթացած, խստացած  
 սրտերին գութ ներշնչել՝ նրա գործը չէ:

Գիտութեան փառաւոր գիւտերը, որոնք դա-  
 րիս պարծանքն են կազմում, իրանց բովանդակու-  
 թեամբ, իրանց նպատակի կողմից չնչին են: Նրանց  
 նշանակութիւնը գլխաւորապէս նիւթական է, այն  
 է՝ զօրացնել մարդու կարողութիւնը բնութեան  
 ուժերի դէմ, հարստութիւն դիզել և մարդու ար-  
 տաքին կեանքի յարմարութիւնները բազմացնել:

Առաքեսւններն ու փիլիսոփաները իրանց բար-  
 ձրը կոչումը կատարում էին առանց հեռախօսի ու  
 հեռագրի. իսկ այժմեան միլիոնաւոր թեկերը, որ  
 սարդի ոստայնի նման ձգուած են երկրագնդիս ե-  
 րեսին, գլխաւորապէս ծառայում են բորսային և  
 լրագիրների խաբեբայական բարբանջանքներին, որոնք  
 գլխաւորապէս խօսում են բարոյական խեղկատակ-  
 ների, քաղաքական արկածների մասին: Մի խօսքով  
 գիտութիւնը մի գէնք է, որ կարող է ե՛ւ իբրև  
 կործանիչ, և թէ՛ իբրև բարւոքիչ տարր հանդիսա-  
 նալ՝ նայելով թէ՛ ի՞նչպէս ենք գործ դնում:

Գիտնական զարգացումը ինքն ըստ ինքեան  
 մարդում է մեր բանականութիւնը միայն, և եթէ  
 մարդս իւր բնութեամբ գիշատիչ անհատ է, գիտու-  
 թիւնը նրա ատամներն է սրում և եղունգներն է  
 ուժեղացնում: Բանականութիւնը ծառայում է գե-  
 տինը պատրաստելու և պարարտացնելու, բայց հողը

նուաճուած է ուրիշ ուժերի միջոցով. բանականութիւնը ծառայողական նշանակութիւն ունի, իսկ առաջնորդող դերը սրտին է պատկանում: Աւետարանը 19 դար սրանից առաջ ասել է. «Սրտից են բղխում թէ չար և թէ բարի խորհուրդները»: Աստուածային հոգեբանը, Յիսուս Քրիստոս, առաջինն էր որ ցոյց տուեց, թէ հասարակական, քաղաքական և այլ պատմական կեանքի միակ աղբիւրը մարդու հոգին է, և որքան կատարեալ է հոգին, նոյնքան կատարեալ կը լինին և նրա բոլոր գործերը: «Եթէ ուզում էք, ասում է քրիստոնէութիւնը, որ Ձեզ շրջապատող կեանքը փոխուի, փոխուեցէք դուք ինքներդ, կըթեցէք Ձեր սիրտը»:

Եղբայրութեան ու սիրոյ կեանքը, Աստուծոյ արքայութիւնը երկրիս վրայ հնարաւոր է. միայն պէտք է նրան որոնել ո՛չ թէ մեր շուրջը, արտաքին իրերի մէջ, այլ մեր մէջ, մեր սրտի մէջ: Իսկ սիրտը դուրս է գիտութեան ազդեցութիւնից. նա կրօնին է միայն ենթակայ: Գիտութիւնը չի կարող մարդուս իւր կամքը փոխել տալ: Սպառնալիքով ու բռնութեամբ կարելի է նրան չար գործերից հեռացնել, բայց անկարելի է չար կամքը ոչնչացնել, որ մի ներքին շարժումն է, և արտաքին ազդեցութիւնների տակ չի ընկնում:

Բայց աւետարանական կրօնը կարող է այդ անել. նա խօսելով մեզ հետ Աստուծոյ մասին, իբրև

ամենակատարեալ սիրոյ ու անպայման ճշմարտութեան մասին, այլև ցոյց տալով մեր դէպի նա ունեցած պարտկականութիւնները լցնում է մեր սիրտը մի տեսակ չերմերանդութեամբ դէպի բարձրագոյն էակը, զարթեցնում է մեր մէջ նրան արժանի որդիք լինելու բաղձանքը, ներշնչում է մեզ հնազանդ լինել նրա պատուիրաններին, որովհետև անշնչելի բարոյական օրէնքներ են:

Միմիայն քրիստոնէութիւնը յանուն բարձրագոյն Արդարութեան, որ է ինքն Աստուած, հանապազ դրդում է մարդուս միշտ առաջ գնալ բարոյական կատարելագործութեան շաւղով:

Այս բոլորի ընդհանուր հետեանք այս է. Ամբողջ մարդկութեան բարձրագոյն իղէալը Աստուծոյ արքայութիւնն է. նրա իրագործման միջոցներն են՝ մարդկային հոգու վերակենդանութիւնը, քրիստոնէական աշխարհահայեցողութեան զարգացումը, աւետարանական սիրոյ ու ճշմարտութեան ոգևով դաստիարակուած կամքը:

Մի այսպիսի եզրակացութիւն գիտութեան համար կարող չէ անպատուաբեր համարուել: Գիտութիւնը իւր գործունէութեան համար որոշ ասպարէզ ունի, որ նոյնպէս շատ պատուաւոր է. նրա ամէն մի յառաջընթաց քայլը մեծամեծ բարիքներ է մատակարարում մարդկութեան: Գիտութիւնն ու կրօնը, եթէ նրանց նշանակութիւնը հասկանանք

ինչպէս որ պէտք է, երբեք կարող չեն հակառակ լինել, այլ նրանք լրացնում են միմեանց:

Եւ իսկպպէս թէ գիտութիւնը և թէ կրօնը միևնոյն առարկայի հետ գործ ունին, այն է՝ ամբողջ տիեզերքը իւր բոլոր կազմութեամբ և մասնաւորապէս մարդը, որ անհուն տիեզերքի մէջ իբրև առանձնացած աշխարհ է ներկայանում, ուսումնասիրել գիտութիւնը պատասխանելով մեր բնականութեան դրած հարցերին, իսկ կրօնը մեր սրտի հարցերին՝ երկուսն էլ լուսաբանում են աշխարհիս գոյութեան առեղծուածը՝ միայն թէ երկու տարբեր կողմերից:

Գիտութիւնը ցոյց է տալիս այն յաւիտենական օրէնքները, որոնց համեմատ տիեզերքի կեանքն է ընթանում. նա որոնում և գտնում է բնութեան մէջ նորանոր ուժեր, որ մարդու կամքին է հպատակեցնում, այլև որոշում է մարդու յարաբերութիւնը դէպի արտաքին բնական միջավայրը.—կարծասելով գիտութիւնը աշխատում է այս հարցին պատասխանել՝ ի՞նչպէս է ապրում աշխարհս: Կրօնի նպատակը ուրիշ է. նա պատասխանում է ուրիշ հարցի՝ մարդս ի՞նչպէս պէտք է ապրի, ի՞նչպէս պէտք է վերաբերուի դէպի աշխարհս և դէպի նա, որ աշխարհից զերազանց է:

Եթէ այսպէս հասկանանք կրօնի ու գիտութեան նշանակութիւնը, նրանց մէջ չի կարող հա-

կառակութիւն տեղի ունենալ և չի կարող կրօնը գիտութեամբ փոխարինելու խնդիրը ծագել:

Իայց երբ կը հաստատուի Աստուծոյ արքայութիւնը. այս հարցին ոչ ոք չի կարող պատասխանել: Քրիստոս ասում է, թէ չենք կարող այդ գիտենալ, ուստի և միշտ պէտք է պատրաստ լինենք նրան զիմաւորելու, ինչպէս պէտք է պատրաստ լինի տունը պահպանող տանուակերը, կամ ինչպէս պէտք է պատրաստ լինենին կուսանք շահերով փեսային զիմաւորելու:

Ի՞նչպէս կարող ենք գիտենալ, թէ մարդկութիւնը օրքան հեռու է իւր նպատակից, երբ չըզիտենք թէ մարդկութիւնը օրքան արագ իւր նպատակին է մօտենում: Մենք միայն կարող ու պարտական ենք այնպիսի կեանք վարել, որ Աստուծոյ արքայութիւնն է մօտեցնում. թէ ի՞նչ կեանք է այդ, ամէնքս էլ լաւ գիտենք: Աւետարանը պարզ կերպով յայտնում է այդ բաւական է որ չդորձենք այն, ինչ որ չպէտք է դորձենք, և դորձենք այն, ինչ որ պարտական ենք դորձել. բաւական է որ մեզանից ամէն մէկը մեր մէջ եղած լուսով սկսի ապրել, որ երկրիս վրայ հաստատուի Աստուծոյ աւետուած արքայութիւնը, որին զիմում է իւրաքանչիւր մարդու սիրտ:

Բ.

ՊԱՄԲԻ ԲՐԻՍՏՈՆԵԱՎԱՅԵԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՆԻՆԻՆԵՐ

«Աստուծոյ արքայութիւնը ո՛րքն ան  
ներսումն է» (Դուկ. Ժէ 21):

«Երկնքի արքայութիւնն ուժով է առ-  
նվում, և ուժովներն յափշտակում են նրան»  
(Մատ. Ժա. 12):

Մարդս վերին աստիճանի բարդ արարած է. նա ծնվում է և ապրում բազմաթիւ զանազանա-  
կերպ հակումներով ու պիտոյքներով, որոնք տար-  
բերվում են թէ՛ իրենց բնութեամբ և թէ՛ արտա-  
յայտութեան ոյժի կողմից:

Պիտոյքները լինում են՝ մարմնական, Ֆիզիոլո-  
գիական ու հոգեկան, մտաւոր, գեղասիրական ու  
բարոյական:

Եթէ բաւականութիւն տանք միմիայն մեր  
մարմնական պիտոյքներին, այն ժամանակ կեանքը  
կենդանական կը լինի՝ առանց գաղափարի, առանց  
բարձր ձգտումների, առանց հոգեկան յոյզերի, և  
որը իսկապէս ասած կեանք էլ կարելի չէ կոչել:

Այն բոլորից՝ երբ մարդ սկսում է բաւականու-  
թիւն տալ իւր հոգեւոր պիտոյքներին, նա սկսում է  
հասկանալ կեանքի էութիւնը. գիտութեան միջոցով,  
իւր զննող մտքի շնորհիւ փոքր առ փոքր տեղե-

կանում է տիեզերքի կազմութեան, որոշ կերպով  
ըմբռնում է իւր ոյժերի ու կարողութեան չափը,  
և բնութեան ոյժերն իրեն հպատակեցնելու մէջ ա-  
ւելի ճարպիկ է դառնում: Բայց ոչ այս չափ միայն:

Մարդս իւր առաջ կատարուող համաշխարհա-  
յին թատերգութեան հանդիսական չէ միայն. նա  
գործող անձն է, դերասաններից մէկը, որ այդ  
թատերգութեան անմիջապէս մասնակից է: Թէ ի՛նչ  
օգուտ կը քաղէ մարդ իւր ըմբռնած ոյժերից, ի՛նչ  
գեր կընտրէ իրեն համար՝ արդեօք ազնիւ հերոսի՞,  
ընդհանուրի բարօրութեան անձնանուէր մշակի՞, թէ  
փոքրօրդի եսասերի—այս մի լուրջ ու խորիմաստ  
խնդիր է: Բաւական չէ միայն մեր պարտականու-  
թիւնները ծանաչել, հարկաւոր է նրանց կատարելու  
կամք: Որպէս զի մարդ իսկապէս ճշմարիտ ու բա-  
նական կեանքի ծանապարհի վրայ լինի, բաւական  
չէ միայն մտքի իմացականութիւնը, այլ հարկաւոր  
է կամքի ներքին ձգումն, հարկաւոր է արիութիւն:

Տուէ՛ք բաւականութիւն սրտի պիտոյքներին,  
դրէ՛ք մարդու սրտի առաջ այնպիսի խնդիր, որ հի-  
ացնէ, զմայլեցնէ նրան. դրէ՛ք նրա առաջ այնպիսի  
գաղափար, որ իւր վեհութեան հրապոյրով մարդու  
կամքը զրաւի, և դուք կը ստանաք մի կեանք, որ  
գաղափարական է: Մեր առօրեայ կեանքի անկա-  
նոնութեան, նրա մռայլ ու անմխիթար իրականու-  
թեան պատճառը այն է, որ սրտի պահանջներին

բոլորովին անտարբեր ենք վերաբերվում, որ մեր կամքը չար ու ապականուած է:

Ուստի կարծում ենք, որ կամքը կանոնաւորապէս դաստիարակելու զիտութիւնը պէտք է լայն կերպով տարածուած լինէր՝ իբրև կեանքի հիմնաւոր զիտութիւն: «Մինչդեռ, ասում է մի Փրանսիացի մատենագիր, մարդիկ զգում են ուսուցիչներին ու զիտութիւնների կարիք ամէն բանի մէջ, միմիայն կեանքի զիտութիւնը նրանք չեն ուսումնասիրում և չեն էլ ուզում ուսումնասիրել»: Տեսէ՛ք, Ճնողները յորջան հոգս են քաշում իրանց երեխաների Փիզիքական ու մտաւոր զարգացման մասին, և յորջան քիչ են մտածում նրանց բարոյական կրթութեան վրայ:

Ուշադրութիւն են դարձնում, որ երեխաների սենեակի օղամուտը ժամանակին բացուի. երեխաներին պահում պահպանում են ամենաչնչին խոնաւութիւնից կամ յրտից, որոշ ժամերին ինչպէս դեղ կերակուր են տալիս, ամենաչնչին հիւանդութիւնների ժամանակ իրանց բոլոր ուշքն ու միտքն են լարում: Երեխան սովորել սկսեց. նրա համար պատրաստ են մանկավարժական կատարելագործուած միջոցներ, դաստիարակներ, դաստիարակչուհիներ, ռեպետիտորներ, և իրանք Ճնողներն էլ ամենայն լրջութեամբ համարեա ամէն մի դասին ուշք են դարձնում:

Իսկ բարոյական կրթութեան վրայ դարձնում են արդեօք իրանց ուշադրութեան զօնէ հարիւրերորդ մասը:

Եթէ երեխան առողջ է, ծնողներին ի՞նչ է վրդովում. նրա հոգու անժամանակ ապականումը, նրա մտքի դանդաղ զարգացումը...

Երբ երեխայի մէջ երեւան են զալիս այն ախտերը, որ նա մօր կաթի հետ ծծել է, կամ մանկական սենեակի օդի հետ է ներշնչել, երբ նրա ամէն մի նոր խօսքը աւելի ու աւելի հրապարակ է հանում ազահութեան, ստախօսութեան, խարդախութեան նշանները և կամ մանկական հասակում պատահող ուրիշ արատները, երեխայի հոգու ապականութեան այս նշանները նոյն իրարանցումը առաջ բերում են տան մէջ, ինչ որ, օրինակ, սկարլատինը, զիֆտերիտը և կամ մի այլ մանկական հիւանդութիւն: Սրդեօք աշխատում են ամէն կարելի միջոցներով բարոյական ախտի պատճառները գտնել, արդեօք բարոյական դեզինֆեկցիայի միջոցներ ձեռք առնվում են, ինչ որ տան մէջ մանկակական հիւանդութիւն պատահելիս:

Դառնանք երիտասարդական հասակին:

Կրթուող երիտասարդութեան մէջ յորջան բազմատեսակ շրջաններ և ակումբներ կան, որոնց նրպատակն է Փիզիքական, գիտական կամ գեղասիրական զարգացումը: Գիտէ՞ք արդեօք զէթ մի քանի

էտիկական (բարոյակրթական) շրջաններ, որոնց նը-  
պատակը բարոյական ինքնազարգացումը լինէր. ի-  
րականութիւնը այս բոլոր հարցերին վհատեցուցիչ  
գառնութեամբ լի պատասխան է տալիս:

Ինչո՞ւ է այսպէս, դժուար չէ հասկանալ:

Քաղաքական տնտեսագիտութեան մէջ իբրև  
օրէնք է ընդունուած, որ հողերի մշակութիւնը ըս-  
կուած է միշտ նուազ բարեբեր, սակայն ամենից  
քիչ հողս պահանջող կտորներից, և յետոյ արդէն  
կամաց կամաց մարդիկ անցնում են աւելի պտղա-  
բեր հողի, որը սակայն աւելի մեծ սշխատանք է  
պահանջում և աւելի շատ հողս ու ծախք բարգա-  
ւաճած վիճակի հասնելու համար:

Նոյնը տեսնում ենք և կրթութեան ասպա-  
րիզում: Մարդիկ սկսում են նախ ամենապարզ ե-  
րևոյթները ուսումնասիրել, որոնք մեր վարք ու  
բարքի վրայ այնքան մեծ ազդեցութիւն կարող չեն  
ունենալ և զուցէ ապագային անցնեն աւելի լուրջ  
ու արմատաւոր երևոյթներին, որոնք պահանջում  
են և աւելի մեծ ուշադրութիւն և մեծ աշխա-  
տանք, բայց փոխարէնը աւելի բարւոքում են և մեր  
կեանքը:

Անտարակոյս՝ շատ աւելի հէշտ է մանկան ա-  
ռողջութիւնը զօրացնել, նրան ամբարցնել, ճարպիկ  
զարձնել, նրա միտքը պէսպէս դիտութիւններով  
կարողացնել, նրա գեղասիրական ճաշակը զարգաց-

նել, քան թէ նրա կամքը ուղղել և նրանից բարոյ-  
ական կատարեալ տիպար ստեղծել:

Յունաց իմաստուն Եպիկտետը տեսւմ է.  
Դուք տէրութեան մեծ ծառայութիւն կը մատու-  
ցանէք, եթէ բարձր շինութիւններ կառուցանելու  
փոխանակ՝ աշխատէք ձեր քաղաքացիների սիրտը  
բարձրացնել, որովհետև շատ աւելի լաւ է, եթէ  
մարդիկ բարձր հողեկան կարողութեամբ խրճիթ-  
ներում ապրին, քան ցած հողիները պալատներում  
պտտեն:

Սուրիֆորը իւր «Գիւլիւերի» մէջ խորհուրդ է  
տալիս տէրութեան պաշտօնւոյ քնտրելու ժամանակ  
աւելի ուշադրութիւն դարձնել նրանց բարոյական  
յատկութիւնների, քան թէ ընդունակութիւնների  
ու տաղանդի վրայ: Նրա կարծիքով «ամենաբարձր  
մտաւոր կարողութիւնը չի կարող բարոյական յատ-  
կութիւնների տեղը ունել, և ամենից վտանգաւորն  
է՝ տէրութեան պաշտօնները յանձնել տաղանդաւոր,  
բայց բարոյական յատկութիւններից զուրկ մար-  
դոց, որովհետև տղիտութիւնից առաջ եկած սխալը  
հասարակական կեանքի համար կարող չէ այնպիսի  
վտանգաւոր հետեանքներ ունենալ, ինչ որ կարող է  
առաջ բերել բնութիւնից բարոյապէս ապականուած  
մարդու գործունէութիւնը, որ իւր տաղանդի շնոր-  
հիւ իւր արատները աւելի ևս կարող է զարգաց-  
նել, բայց միանգամայն թաքտւն պահէր»:

Մարդիկ միամտաբար կարծում են, թէ բաւական է որ տղին ցոյց տաս, թէ ի՛նչ է բարին և ի՛նչ է չարը, և նա բարին կը դորձէ: Մենք տակաւին շատ անգամ չենք հասկանում, թէ բարոյական դաստիարակութիւնը ոչ թէ բանականութեան զարգացման, այլ սրտի ու կամքի կրթութեան հետեւանք է:

Փոխանակ երեխային հասկացնելու թէ ի՛նչ է բարին ու չարը, եթէ հարկադրէք նրան զգալ, եթէ հարկադրէք ձեր կամ ուրիշի օրինակով առաքինութիւնը սիրել ու մղրութիւնը պատել, եթէ նրա ազնիւ ձգտումները զօրեղացնէք, իսկ վատթար հակումները ոչնչացնէք, եթէ բորբոքէք նրա թմրած զգացումները և ներշնչէք բարձր ձգտումներ, դուք իսկապէս դաստիարակած կը լինէք երեխային և մարդ զարձրած:

Ընդհակառակն, այժմ տեսէք, թէ ի՛նչ վատ արդիւնքներ է տալիս երեխայի անկանոն դաստիարակութիւնը:

Թէ զրականութեան և թէ խօսակցութեան մէջ յաճախ կը լսէք, որ մեր երիտասարդները բարձր ձգտումներից զուրկ են, նրանց զազաւարները ազբատ, և կամքը թոյլ. չկան զազաւարի համար աշխատողներ. խիղճ, պարտք, բնդհանուրի բարօրութիւն—մոռացուած խօսքեր են:

Բայց սրտեղից կարող էին առաջ զալ բարձր զազաւարներ, բարձր ձգտումներ, ուժեղ կամքեր: Դաշտում բուսնում է այն՝ ինչ որ ցանում են. երիտասարդը դառնում է այնպէս, ինչպէս որ դաստիարակել է նրան բնտանիքը, դպրոցը և հասարակական կեանքը:

Մեր բարոյական անձնաւորութիւնը դաստիարակվում է ոչ թէ բնութեան կախարդական արհեստանոցում զազանի ուժերի միջոցով, այլ մեզ շրջապատող կեանքի մէջ: Իսկ եթէ երիտասարդների դաստիարակութեան ժամանակ հարկին չափ ուշադրութիւն չենք դարձնում կամքի հաստատութեան, բնաւորութեան վրայ, այլ միայն խելքն ենք մշակում, ճաշակը նրբացնում, այն ժամանակ չի կարող լինել և հաստատակամ բնաւորութիւն, և չի լինի մինչև որ դաստիարակութեան ձևը չփոխուի:

Բնաւորութիւնը անփոփոխ բան չէ. նա կազմակերպուած է այն հիմունքից, որ բնութիւնն է դրել, և մշակուած է բնտանիքի, հասարակութեան ու դպրոցի ազդեցութեան տակ: Ուստի՝ եթէ ձեր սրտում իրէյալի ծարաւ ունիք, սուրբ ձգտումներ դէպի բարին, դէպի ճշմարտութիւնը, եթէ ուզում էք որ այդ բոլորը տակաւին չճաղկած չթռոմեն, որ կեանքը նրանց օտնակոխ չանէ, ձեր ոսկէ երազները չապականէ, աշխատեցէք ձեր բնաւորութիւնը զարգացնել, պնդացրէք ձեր կամքը, զիմեցէք այն

բանին ծառայելու, որ պէտք է մարդուս, որ կեանքին է զարգարում, և որով ապրում են մարդիկ. դիմեցէք զէպի ամենալաւ յաղթանակը, այն է՝ ձեր բնութեան ցած ու վատթար հակումներն ընկձել: «Ով որ ինքն իրան կարողանում է հնազանդ պահել, այնպէս որ կոպիտ կրքերը բանականութեան հպատակին, իսկ բանականութիւնը—Աստուծոյ, նա է իսկպէս յաղթանակակիրը և աշխարհի տէրը» ասում է Թ. Կեմպային:

Զի կարելի չխոստովանել, որ այդ յաղթանակը հեշտ բան չէ: Բարոյական ինքնազատիարակութիւնը, մեր հոգեկան աշխարհի աստիճանական զարգացումը մի այնպիսի աշխատանք է, որ յարատե ու մշտական քննութիւն ու վարժութիւն է պահանջում: Մեծն Պետրոս՝ հասկանալով իւր անսանձ ու կրքոտ բնութիւնը, ասում էր. «Ապստամբ զօրքերը ընկձեցի, յաղթեցի Սոփիային, Կարոլոսին, բայց ինքս ինձ չեմ կարող զսպել»:

Բարոյապէս կատարեալ մարդը սիրոյ ու ճշմարտութեան կատարեալ մարմնացումն է. իսկ զազափարը որքան բարձր է, նոյնքան էլ դժուար է նրա իրականացումը, նրան հասնելու համար մեր հոգու բոլոր ընդունակութիւնները պէտք է լարուին և նրա կողմը ուղղուած լինին: Հարկաւոր է, որ այդ զազափարը՝ մեր միւս զազափարների հետ մշտապէս շփուելով, իւր ազդեցութեան ասպարէզը կա-

մաց — կամաց ընդլայնէ և մեր ներքին կեանքի կենդրոնը դառնայ:

Եթէ ուզում ենք, որ աւետարանական սիրոյ ու ճշմարտութեան զազափարը մեր անբաժանելի գոյքը դառնայ, մեր մարմինն ու արիւնը, նրա վրայ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնենք: Եթէ նա կայծի նման միայն պէտք է վառուի և իսկոյն էլ հանդի մեր իմացականութեան մէջ, այդ նոյն է թէ զոյութիւն չունի. նա կը մեռնի, կը մոռացուի, հետք անգամ չի թողնի: Բարձրագոյն զգացումները, բարոյական կատարելութեան ձգտումը մեր կեանքին առաջնորդ լինել, նրան յայտնի ուղղութիւն տալ այն ժամանակ միայն կարող են, եթէ մեր միտքը մշտապէս ուղղուած է առաքինութեան ու ճշմարտութեան լուսաւոր զազափարների վրայ, և նրանցով մեր հոգին ներշնչուած:

Աւետարանը ցոյց է տալիս մեզ կեանքի կատարելագոյն ճանապարհը: Մարդկային բարոյական պատկերը, որ մարմնացած է սիրոյ Աստուածային Բարոյչի մէջ, լի է հոգեկան զարմանալի զեղեցիկութեամբ: Ունեցէք այդ պատկերն ու զազափարը ձեր աչքի առաջ, և նրա դժերը կը հաստատուին ձեր հոգու մէջ: Նկատուած է, որ երկար տարիներ միասին ապրող ամուսինները, ոչ թէ միայն բնութեամբ, հակումներով ու սովորութիւններով, այլ և մինչև անդամ երեսով սկսում են միմեանց նմա-

ներ: Այսպէս Հղօր կերպով է ներդրած ուժ մարդուս վրայ միևնոյն տպաւորութեան յաճախակի կրկնութիւնը:

Թող ուրեմն և այն տպաւորութիւնները, որ դուք Աւետարանի ընթերցումից ստանում էք չըլինին պատանեկական, կցկտուր ու բոպէական: Որքան աւելի յաճախ Մարիամին պէս նստած լինիք Քրիստոսի ոտների մօտ, որքան երկար մտածէք աւետարանիչների զրած էջերի վրայ, նոյնքան էլ աւելի ծանօթ, աւելի մերձաւոր և աւելի թանկագին կը լինի ձեզ Քրիստոսի պատկերը, և նոյնքան էլ աւելի կենդանի ու պարզ կերպով նրա յատկութիւնները ձեր բարոյական տիպարի մէջ կսկսին արտայայտուել:

Քրիստոսի պատկերը պէտք է լինի մեր թէ՛ մասնաւոր և թէ՛ հասարակական կեանքի խնդիրներից մէկը: Եթէ մեր ժամանակակից կեանքը դեռ շատ հեռու է բարոյական կատարելութիւնից, եթէ նա յաճախակի պիկոժովում է անամօթ անբարեխղճութեամբ ու բռնութեամբ, պատճառն այն է, որ մեր մէջ շատ քիչ մարդիկ կան, որ մարմնացրած լինէին Քրիստոսի պատկերը, իրանց կամքը կըթած լինէին միմիայն նրա խօսքերին ծառայելու: Մեր մասնաւոր ու հասարակական կեանքը այն մեծ պակասութիւնն ունի, որ Քրիստոսի պատկերը կրողների թիւը շատ քիչ է. վերջիններս ամէն տեղ հա-

ղուազիւա են, և ամենուրեք միշտ յանկույի: Ուստի իւրաքանչիւր ոք, որի մէջ աստուածային կայծը դեռ չէ հանգել, որ դեռ բոլորովին ստամոքսին չի նուիրուել, ի նկատի ունեցէք այս սուրբ մեծ դործը: Ներշնչուեցէք Աւետարանի լուսով, մացրէ՛ք մարդոց մէջ Քրիստոսի ճշմարտութիւնը, շինեցէ՛ք ձեր կեանքը այն հիմունքների վրայ, որ Փրկիչն է քարոզել:

Կեանքը խաւարով է պատած, դուք կը լինիք նրա լոյսը. նշանակութիւնն չունի, թէ՛ ինչ դործի մէջ էք դանովում. մեծամեծ դործեր էք արդեօք կատարում, թէ՛ համեստ առօրեայ աշխատանք՝ միևնոյն է. գլխաւորն այն է, որ միշտ և ամենուրեք հաւատարիմ լինիք Քրիստոսի խօսքերին. «Եղէք երկրիս ազ. եղէ՛ք աշխարհի լոյս» . գլխաւորն այն է, որ ամէն տեղ ձեզ շրջապատողների վրայ բարի ազդեցութիւն անէք, ձեր անձնական օրինակով հարկադրէք սիրել առաքինութիւնն ու ճշմարտութիւնը, սովորեցնէք զնահատել կեանքի բարոյական զեղեցկութիւնը:

Մենք առհասարակ շատ թեթեւ աչքով ենք նայում մեր մանր պակասութիւնների ու թուլութիւնների վրայ. բայց այդ մեծ սխալ է, և այդ պակասութիւնները շատ լուրջ նշանակութիւն ունին:

Ինչպէս որ Ալպերն ու Նիմալայները կազմուած

են աւագի ամենաչնչին հասիկներրից, և անեղր ուկիանոսները ամենամանր կաթիլներրից, նոյնպէս և մեր կեանքը առանձին փոքրիկ փաստերից է գուժարվում:

Հերոսները ծնվում են դարերի ընթացքում և մեծամեծ դործեր ամէն ժամ չեն կատարվում, այն ինչ կեանքը իւր կարգով ընթանում է՝ բերելով իւր հետ հասարակ առօրեայ կարիքներ ու հոգսեր: Ահա այդ մանր հոգսերին ցոյց տուած վերաբերմունքով մարդս աւելի լաւ է ծանաչվում. այստեղ, այսպէս ասենք, ամէն մի փետրիկ հողմի ընթացքն է ցոյց տալիս, ամէն մի չնչին յարզ դետի հոսանքը որոշում... Փրկիչն ասում է. «Ով որ փոքրի մէջ հաւատարիմ է, հաւատարիմ կը լինի և շատ բանի մէջ. իսկ ով որ քիչ բանի մէջ անիրաւ է, մեծի մէջ ևս անիրաւ կը լինի» (Ղուկ. Ժզ. 10):

Յիշեցէք, որ դուցէ ձեր կեանքում ձեզ երբեք չի պատահել մեծ գործեր կատարել. բայց դուք ամենքդ էլ կարող էք և պարտական սոյնիւ կերպով կատարելու ձեր վրայ դրած կոչումը, այն է՝ կեանքի մէջ մտցնել առաքինութեան ու ճշմարտասիրութեան այն մասնիկը, որը բնութիւնից ձեզ արուած ընդունակութիւններին համապատասխանում է:

Կրկնում եմ, ամէն մարդ կարող չէ հերոս լինել, մինչև անգամ նրանք, որ մեծ մեծ գործեր կատարելու ձիրքերով եմ օժտուած, ամէն անգամ ա-

ռիթ չեն ունենում իրանց ձերքերը երևան հանելու, որովհետև մեծ գործերի կարիք ամէն օր չի լինում: Բայց ամէնէս էլ կարող ենք ազնիւ ու բարի մարդիկ լինել, կարող ենք մեր վրայ կեանքի բարձրագոյն դադարները կրել, և Աստուծոյ արքայութիւնը երկրիս վրայ հաստատելու գործում լաւ մշակ լինել:

Եւ եթէ դուք ուզում էք բարեխղճաբար կատարել ձեր կոչումը երկրիս վրայ, պատրաստուեցէք ձեր անձնատրուութիւնը կատարելագործելու, որ արժանի լինիք այն բարձր նպատակին, որի համար բարձրագոյն կամքը դոյութիւն է տուել:

Լաւ իմացէք, որ բարոյական յոյժերն էլ փիղիքականների նման իրանց զարգացման համար վարժութեան են կարօտ. հեշտութեամբ պուլեր զորելու համար պէտք նախ ֆուկերից սկսել. ուստի միշտ աշխատեցէք, մշակեցէք ձեր կամքը, վարձեցէք նրան բարին ու ճշմարիտը կատարելու: Երբեք մի զլանաք ձեր առաքինական վարքը արտայայտելու ամէն մի պատահած դէպքում: Ով զիտէ, դուցէ մի փոքրիկ աննշան դէպք առանձին ազդեցութիւն գործէ ձեր հոգու խորքերի վրայ, ձեզ անյայտ որտի լարերը լարէ, և ձեր ամբողջ կեանքը յաղթական սիրոյ մեղեդի դառնայ:

9.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՅԼԱՍԵՐՈՒՄՆ

«Ով որ ունի, նրան կը տրուի և կաւելանայ, բայց նա որ չունի՝ նրանից այն ունեցածն էլ կառնուի» (Մատթ. 13. 29):

Դաւիթ մարգարէն իւր սաղմոսների մէջ ասում է, թէ միայն անմիտը իւր սրտի մէջ կարող է հերքել Աստուծոյ զոյութիւնը: Բայց այդ անմտից էլ աւելի խելօք չեն այն մարդիկը, որոնք տրամաբանական ապացոյցներով աշխատում են անհաւատներին համոզել:

Հաւատի ու կրօնի վերաբերեալ հարցերում ապացոյց մէջ բերելը մի տարակուսելի ու ապերախտ դործ է. այդ նոյն բանն է, եթէ մարդ կոյրին պատմել սկսէ Ռափայելի նկարած Տիրամօր աստուածային գեղեցկութեան մասին, կամ խուլին՝ Ռոսինիի ու Մոյարտի մեղեդիների մասին:

Թէ կոյրը և թէ խուլը գուցէ մեծ յօժարութեամբ հաւատան ձեր խօսքերին, թերևս և համաձայնին, որ այդ իսկապէս ճիշտ է, բայց իրենք այդ տպաւորութիւնները չեն կարող ստանալ, չեն կարող զգալ այն յուզմունքը, որ դուք էք զգացել: Նոյնը կարելի է անել և հաւատի ճշմարտութիւնների մասին: Թո՛ղ անհաւատների աչքերի առաջ բարձրանայ

ամենապայծառ ապացոյցների մի շարք կրօնական այս կամ այն ճշմարտութիւնը հաստատող, այդ նրանց ամենեին չի համոզիլ: Նրանք կարող են համաձայնել, որ կրօնը ճշմարիտ է, բայց իրանք չեն կարող հաւատալ, որովհետև բոլորովին ուրիշ բան է հասկանալ կրօնի ճշմարտութիւնը, և ուրիշ՝ կենդանի հաւատ ունենալ: Որպէս զի մարդ իսկապէս հաւատացող լինի, պէտք է հաւատայ ո՛չ թէ միայն մտքով, այլ և բոլոր սրտով ու հոգեով (Մատթ. Իբ. 37):

Քրիստոնէութիւնը փրկութեան աւետիք է բոլոր աշխարհին, որովհետև աշխարհը, ինչպէս ասում էր Քրիստոս, ընկղմած էր չարիքի մէջ: Այդ համաշխարհային չարիքից ազատուելու ճանապարհը բացեց Յիսուս Քրիստոս իւր վարդապետութեամբ և իւր օրինակով. և ով որ այդ չարիքի բեռն էր զգում, ով որ չէր բաւականանում կեանքի ներկայ կազմով, այլ ձգտում էր Աստուծոյ ճշմարտութիւնը երկրիս վրայ մտքնայնել, այնպիսին լսում էր Քրիստոսի խօսքերին և հետևում նրան:

Իսկ ով որ իրան լաւ էր զգում այս աշխարհում, և կամ յոյս ունէր իւր միջոցներով ապագան բարւոքել, այնպիսուն համար քրիստոնէութեան միտքը մութ մնաց: Այնպիսի մարդոց համար Քրիստոսի վարդապետութիւնը մի համը խօսք էր, որովհետև նրանք չէին տեսնում այն չարիքը, որից

փրկելու եկել էր Քրիստոս. իսկ նրանց չարիքը չբտեննելու պատճառը այն էր, որ նրանք իրենք ևս ընկղմած են աշխարհային հոգսերի մէջ, նոյն չարիքի մէջ, և չեն ուզում դուրս գալ, և իրենց վրայից այդ կարիքը թօթափել:

Մեղիոնաւոր մարդիկ այնպէս խորը թաղուած են իրանց նիւթականը մատակարարելու հոգսերի մէջ, որ մտածելու անգամ ժամանակ չունին, թէ իրանց գործունէութիւնը ի՞նչ նպատակներով է ոգևորուած, թէ այդ նպատակները՝ բարձր են արդեօք թէ ցած, թէ ի՞նչ են նրանք ինքն ըստ ինքեան, և թէ ի՞նչ դիրք են բռնում քաղաքական, հասարակական և կրօնական կեանքում, և համապատասխանում են արդեօք գոնէ մասամբ—այն պահանջներին, որոնք ինքն ըստ ինքեան մարդկային անձնաւորութեան դադափարից են բղխում:

Այդպիսի մարդոց ճաշակը՝ բարձրագոյն խրնդիրների նկատմամբ, բթացած է լինում և այդպիսի հարցերով զբաղուելը չնչին գործ ու ժամանակի կորուստ են համարում:

Ոմանք էլ նիւթականապէս բոլորովին ապահովուած լինելով և ամէն տեսակ պարապմունքներից ազատ՝ իրանց բոլոր ժամանակը զուարճութիւնների ու կերուխումի են տալիս:

Անձնագոչ գործունէութիւնը, հասարակաց բարորութեան համար աշխատելը նրանք երազողի

ցնորք են համարում. բարոյականութեան բարձրագոյն պահանջները՝ ազատութեան աւելորդ խոչընդոտներ:

Կեանքը ժպտում է, ասում են, նրանք, հրապուրում, խոստանում է երջանկութիւն, ինչ՞ու են պէտք լուրջ դէմքեր, կեանկի խորհուրդին վերաբերեալ խնդիրներ ու հարցեր: Առողջութիւնդ ու նիւթական միջոցներդ առատ և աւելի ևս են, ապա ուրեմն վայելիր կեանքը և թոյլ աւեր որ ուրիշներն ևս վայելեն:

Այսպիսի հայեցակէտ ունեցողները հարկաւ չեն կարող սրտանց ձգտումն զգալ դէպի քրիստոնէութիւն, որ պահանջում է հրաժարուել անասնական կոպիտ հակումներից և աստուածային սիրոյ ու ճշմարտութեան զաղափարներով ներշնչուել: Նրանք թաղուած են երկրայինի մէջ և մինչև անգամ չեն էլ մտածում երկնայինի մասին. Քրիստոսի ձայնը մուտք չի գտնում դէպի նրանց սիրտը, չի զարթեցնում նրանց մէջ ներկայ վիճակից անբաւական լինելու գիտակցութիւն, և չի զրդում նրանց վերածնուելու համար աշխատելու: Նրանք հոգեպէս չեն անվում, ուստի և պէտք է նիհարանան. այս է բրնութեան օրէնքը թէ՛ Փիղիբական և թէ՛ հոգեկան աշխարհի վերաբերմամբ:

Եթէ լուսամիտ Եւրոպացին նաւի խորտակուելուց յետոյ մի անմարդաբնակ կղզի ընկնի և

հարկադրուած լինի մի քանի տարի շարունակ ան-  
փոյթ գտնուել իւր մարմնի մաքրութեան նկատ-  
մամբ, նա կը դառնայ արտաքուստ կուպիտ, վայրէ-  
նի, կիսամարդ, կիսանասուն:

Նոյնպէս և եթէ մարդ միշտ չունենայ իւր  
մտքի զարգացման մասին հոգալու, նա մտաւորա-  
պէս կը շլատի, կը բթանայ և կարող է մինչև ան-  
ժողութեան հասնել. որուն ապացոյց կարող են լի-  
նել այն բանդարկեալները, որոնք երկար տարիներ  
միայնակ են մնացել:

Սյսպէս նաև այլասերվում է մարդու բարոյա-  
կան բնութիւնը, եթէ հարկաւոր ճշակութիւնն ու  
վարժութիւնը պակասի: Եթէ միշտ արհամարհենք  
մեր հոգեկան պիտոյքները, մեր խղճի վրայ երբեք  
ուշադրութիւն չլարձնենք, կը դառնանք արտա-  
ւոր մարդիկ և կը կորցնենք բարոյականի զգացմուն-  
քը. ժամանակի ընթացքում վերջինս բոլորովին կը  
մեռնի և մարդս ոչ միայն կը դադարի բարոյա-  
պէս կատարելագործուելուց, այլ և բարոյական ար-  
պաւորութիւնները զգալուց և ըմբռնելուց: Կը ստա-  
ցուի արինարբու զազանի տիպար, որ գոռոզու-  
թեամբ ոտնակոխ է անում ամեն մի սրբութիւն.  
մարդկային բոլոր բարձր զգացումները անհետա-  
նում են և մնում է միայն չար զազանը՝ մտքի ու  
գիտութեան ուժով գինուած:

Ճշմարիտ է ասում Պօղոս առաքեալը. «Մենք

ի՞նչպէս կը պրծնենք, եթէ անհոգ լինինք այսպիսի  
փրկութեան համար, որ քարոզեց մեր Տէր Յիսու-  
սը» (Եբր. Բ. 3):

Մեզանից իւրաքանչիւրը իւր սրտի պիտոյք-  
ները, իւր հոգեկան պահանջներն ունի. զրանք են  
մեր սրբազան ու հիանալի տաղանդները. իմացէ՛ք  
գնահատել նրանց ու ճոխացնել. մի՛ խլացնէք ձեր  
սրտում բարի ձգտումները, հնազանդութեամբ հե-  
տևեցէ՛ք ձեր մատաղ, տակաւին սուրբ և կեղտերով  
չապականուած սրտի բաղձանքներին:

Պահպանեցէ՛ք ձեր սրտում Սատուծոյ կայծը:  
Նրան մարելը հեշտ է, բայց մի՛ մոռանաք, որ երբ  
կրակը հանգչի և կեանքի ճրրիկը մոխիրը ցրուէ,  
այլ ևս բոցը բորբոքել անհնար կը լինի: Մարմնի  
լուսատուն աչքն է, ասում է Յիսուս, և եթէ աչ-  
քը վատ լինի, մարմինդ էլ խաւար կը լինի»:

Իսկ եթէ լոյսի աղբիւրը մթնի, ի՞նչ խաւար  
պէտք է պատէ մեզ. և մենք այդ խաւարից խու-  
սափել չպիտի կարողանանք, եթէ արհամարհելու  
լինինք այն լոյսը, որ մեզ տուել է Յիսուս Քրիստոս:

Մենք զարմանալի թեթև աչքով ենք նայում  
մեր կեանքը կաղմակերպելու խնդրի վրայ: Սպեն-  
սերը ասում է. «Կարելի է կարծել, որ մարդկան-  
ցից շատերը նպատակ են դրել իրանց կեանքը այն-  
պէս անցկացնել, որ կարելւոյն չափ քիչ մտածեն»:

Ոչ մի կապալառու յանձն չի առնում մինչև անգամ

ամենափոքրիկ ախոռ շինելու՝ առանց հաշուելու և լաւ մտածելու. ոչ մի որմնաշէն չի դնիլ մի շարք աղիւս առանց ուղղաչափի. իսկ մենք շատ անգամ մեր կեանքն են անցրնում առանց որեւիցէ հարցիլ մասին մտածելու, առանց առողջ ու խելացի կերպով մեր կեանքի ընթացքի վրայ խորհելու: Ապա ինչո՞ւ պէտք է զարմանանք, որ այդպիսի մի շինուածք փլատակվում է և իւր բեկորների տակ մեզ թողնում է. ի՛նչպէս կարող ենք այդ վտանգից ազատուել, երբ արհամարհում ենք Քրիստոսի տուած կեանքի օրէնքը, որը միակ ճշմարիտն է:

Ճիշտ է, քանի որ երկտասարդ ենք և թեթեամիտ, ունինք միջոց, առողջութիւն, դեղեցկութիւն, կարող ենք և առանց հարցերի ապրել և փոքր ի շատ է ուրախ, հեշտ ու ախորժելի կեանք վարել. բայց այդ կեանքը մեզ երկար բաւականութիւն չի տալ. նա մեզ համար շատ շուտով աննպատակ ու տաղտկալի կը դառնայ: Որքան աշխատենք մոռանալ մեր հոգու բարձր պահանջները, չենք կարող դարձեալ բոլորովին արմատախիլ անել նրանց. որովհետեւ ոչ միայն հացով կենդանի է մարդս: Կը դայ այն բուրբուն, երբ մարդ կը զգայ, թէ պէտք է այնպէս ապրել, որ ամէն ժամ, ամէն բուրբուն իմանաս, թէ կեանքում մի յաւիտենական միտք կայ, իմաստ կայ, որ ոյժ ու իրաւունք է տալիս ապրելու:

Յոռեաեսութիւնը (պեսսիմիզմը), որ ժանգի-

նման փոքր առ փոքր մեր ժամանակակից կեանքն է ուտում, նրանից է առաջ դալիս, որ մենք մէկ թեւով դէպի երկինք ենք թռչում, իսկ մեր միւս թւեր կեանքի ցած ու կեղտոտ իրականութեան մէջ է խրուած: Սյստեղից առաջանում է ներքին հակասութիւն, կեանքից անբաւականութիւն և շատ անգամ տարածամ ինքնասպանութիւն: Բայց կեանքը, որքան էլ տխուր երեւի, այնու ամենայնիւ աւելի թանկ է, քան արձիճի մի կտորը, կամ թոյնի կաթիլը: Հարկաւոր է միայն ըմբռնել կեանքի իսկական իմաստը, հասկանալ այն սկզբունքը, որով առաջնորդուած նա առանձին արժէք է ստանում:

Մենք որ Աւետարանը ունինք և նրան ընդունում ենք՝ մանկութիւնից պէտք է հասկացած լինելինք կեանքի այդ իմաստը. պէտք էր որ իւրաքանչիւր ոք իրան քրիստոնէայ անուանողը իւր կեանքը այնպէս կաղմակերպէր, ինչպէս որ հրամայում է Քրիստոսի կտակը: Բայց իրականութիւնը դրա հակառակն է ցոյց տալիս: Սյստեղ հանդիպում ենք մի այնպիսի հակասութեան, որ կարծես առողջ դատողութիւնը զլիսիվայր է գլորվում:

Անկարելի է երեւակայել մի զինուոր, որ զինուորական կանոնները չիմանայ, այսպէս և կարելի չէ ենթադրել, թէ կարող է մի իրաւաբան լինել, որ օրէնսդրութիւնը չգիտնայ. բայց Քրիստոսի վարդապետութեան ամենահիմնական սկզբունքը

չիմացող քրիստոնեայ դուք կարող էք ամէն տեղ տեսնել: Դուք չէք գտնիլ մի աշակերտ՝ գէթ տարրական դպրոց աւարտած, որ Քռիլովի առակներէց մէկն ու մէկը չիմանայ. բայց կը պատահէք հազարաւոր մարդոց, որոնք գիտնականի դիպում ունին և չեն կարող պատմել ձեզ Քրիստոսի լեռան քարոզի բովանդակութիւնը: Ձկայ մի կրթուած մարդ, որ կարգացած չլինի Շիլլերի կամ Տոլստոյի զրուածները, բայց ո՞րքան կրթուած մարդիկ կան, որ մինչև անգամ աւետարանիչների անուշները չըզիտեն:

Դպրոցում Քրիստոսի կեանքից մի քանի փաստեր սերտելով այնպէս ենք կարծում, թէ Աւետարանի հետ արդէն բաւականաչափ ծանօթացել ենք, և յետոյ այլ ևս ձեռներս անգամ չենք առնում մեր ամբողջ կեանքում:

Եթէ մի մարդ՝ իմանալով Սոկրատի, Բեկոնի, Սպինոզայի, Հեգելի և կամ Կանտի կեանքից մի քանի դէպքեր՝ իրան փիլիսոփայ սկսէր անուանել, ի՞նչ կասէիր նրան:

Իսկ այդ փիլիսոփաների նման քրիստոնեաներ միլիոնաւոր են: Զարմանալի չէ ուրեմն, եթէ նոքա՝ չնայելով կրթութեան բոլոր փայլին, ներքին բնութեամբ դարձեալ նոյն կատարեալ զազանն են մնում, և չէր կարող այլ կերպ էլ լինել, որովհետև մարդկութեան լաւ ապագային հաւատ չեն բնծայ-

ում, ոչ էլ ազգերի եղբայրութեան, և երկրիս վրայ Աստուծոյ արքայութեան հաստատուելուն: Նրանք չեն ուզում աշխատել, որ մարդկանց մեծամասնութիւնը Աստուծոյ պատկեր ու նմանութիւն դառնայ, որ մարդ զազանը երկնային հօր որդի դառնայ: Ի՞նչպէս կարող ենք դուքս զալ բարոյական զազանութիւնից, եթէ չենք ուզում հասկանալ, և ներշնչուել Աւետարանի ոգւով, որ կեանքի միակ հիմքն է կազմում:

Բայ արեք Մատթէոսի Աւետարանի Ե, 9 և Է զլուինները, և քանիցս անգամ ուշադրութեամբ կարդացէք, և լաւ մտածեցէք ամէն մի առիթ, ամէն մի խօսքի վրայ, և դուք կը զարմանաք, ո՞րքան իմաստուն ու պարզ, շոշափելու չափ պարզ կերպով այստեղ լուծվում են ամենաբարդ, ամենասուր ու ճակատադրական հարցերը: Առէք, օրինակ, բարոյական փիլիսոփայութեան էական խնդիրներից մէկը — մարդկութեան նպատակի հարցը, թէ ի՞նչ բանի և ի՞նչպէս պէտք է նուիրենք մեր հոգու և մարմնի բոլոր կարողութիւնը, մեր բոլոր կեանքը:

Զանազան ազգեր այլ և այլ ժամանակներում, դանազան դասակարգեր միմիանցից տարբեր պատասխաններ են տուել այդ հարցին: «Եթէ մենք տասխաններ են տուել այդ հարցին: «Եթէ մենք կարողանայինք համեմատել այն երեւակայական աշխարհները, որ ստեղծում է իրեն համար հասարակ երկրազործը և հանձարեղ իմաստասերը, ասում է

անդիլացի փելիստփաներից մէկը, մենք կը գտնէինք զարմանալի տարբերութիւն այդ երկուսի մէջ»:

Թէ ի՞նչ է կեանքի նպատակը, այս խնդրին ճշմարիտ պատասխանը տրուած է մեզ Աւետարանի մէջ երեք բառով, բայց այնպէս, որ եթէ լաւ մտածենք, կը հասկանանք, որ զրանից աւելի խելացի ու կատարեալ վճիռ չէր կարող լինել:

Քրիստոս բացատրելով իւր աշակերտներին նրանց նպատակը աշխարհիս մէջ՝ ասում է. «Իսւք էք աղ երկրի» (Մատթ. Ե. 13): Աղը՝ ինչպէս յայտնի է, համեղացնում է կերակուրը և նրան ապականելուց պահպանում է. առանց աղի ամենահամեղ կերակուրն անգամ անհամ է լինում, և ամենաթարմ ձթերքներն իսկ շուտով փտում են:

Ինչ որ աղը կերակուրների համար է, նոյնն է Աւետարանը կեանքի համար, և նրան հետևողներն ու քարոզողները—մարդկութեան համար:

Կեանքի աստիճանաբար բարւոքումը կարող է միայն հիմնուած լինել աւետարանական սիրոյ ճշմարտութեան վրայ: Մեր ամենացանկալի և սուրբ երազների իրագործումը, ընդհանուր մարդկութեան երջանկութիւնը կարող է իրագործուել, եթէ մարդիկ անխոնջ ու անդադար աշխատեն ստեղծել Աստուծոյ արքայութիւնը իրանց և իրանց մերձաւորների սրտերի մէջ:

Քանի որ այս պայմանը տեղի չունի մարդու

կեանքի մէջ՝ քաղաքակրթութեան ամենափառաւոր յառաջադիմութիւններն ու յաջողութիւնները միայն երեւակայելի կը լինին, բայց ոչ հաստատուն, իսկական ու անյողդողղ. կեանքը իւր դառն փորձով մեր ամէն քայլափոխին մեզ այդ է սովորեցնում:

Մտածել էք արդեօք մի այսպիսի հարցի մասին: Երկրիս վրայ քրքան հրաշալի անկիւններ կան շքեղ բնութեամբ, օրհնուած կլիմայով ու պարարտ հողով, ուր կարծես ամենայն ինչ Աստուած ստեղծած է բերկրալի, զուարթ կեանքի համար: Բայց այդ անկիւններումն էլ, ինչպէս և միւս տեղերում, պակաս չեն դառնութեան արցունքները, հառաչանքներն ու անէծքները:

Որքան առաջ են գնում կեանքի ամէն տեսակ յարմարութիւնները, այնքան էլ երջանկութիւնը մեզ չի մօտենում, չի դառնում աւելի մատչելի:

Ինչի՞ցն է այս. ի՞նչ է պակասում այլ ևս մարդկութեան կատարեալ երջանկութեան համար:

Պակասում է այն, ինչ որ զլխաւորն է, ինչ որ Քրիստոս անուանել է աղ երկրի. պակասում է աւետարանական սէրն ու ճշմարտութիւնը մարդկանց մէջ, առանց որոնց ամենափարթամ մայրաքաղաքներում, շքեղ պալատներում ևս կեանքը աւելի երջանիկ չէ, քան Բեզուինի վրանում կամ Էսքիմոսի իւրտում: Յարմարութիւնները շատ են, բայց երջանկութիւն նրանք չեն տալիս:

Միթէ այս բոլորը ճոխաբար յոյց չի՞ տալիս, թէ ժամանակակից քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը, որ հիմնուած է անտեսական նիւթապաշտութեան սկզբունքների վրայ, մատակարարում է միայն արտաքին կեանքի յարմարութիւններ, և ինքն ըստ ինքեան, առանց մարդկութեան բարոյական վերածնութեան, առանց հասարակական բարեփոխութեան աւետարանական սիրով ու ճշմարտութեամբ, կարող չէ մարդու կեանքը երջանիկ պայծառ ու գուարթ դարձնել:

Առանց Աւետարանի վարդապետութեան, ինչպէս կերակուրը առանց աղի, կեանքը համ չի ունենալ. նա անշուշտ կայլանդակուի, կապականի ու անբարոյական կը դառնայ:

Եւ մենք չենք կարող դրանից խուսափել, եթէ արհամարհենք այն փրկութիւնը, որ մեզ աւետել է Յիսուս Քրիստոս:

Ինչպէս կարող ենք մտցնել ազնուութիւն, արծարծել սէր, տարածել ճշմարտութեան լոյսը այս սնոտի, եստէր, չար ու ստութեամբ լի աշխարհում, եթէ ինքներս չենք հասկանում նրանց ամբողջ իմաստը, չենք զգում նրանց շիւթից փառքի ազդեցութիւնը:

Ըմբռնել և զգալ թէ ինչ է բարին, սէրը և ճշմարտութիւնը՝ կարելի է միայն կարդալով և ուսումնասիրելով Աւետարանը, իմանալով Քրիստոսի:

խօսքը: «Ճանաչեցէք ճշմարտութիւնը, ասում է Քրիստոս, և ճշմարտութիւնը կազատէ Ձեզ»:

Գ.

### ԱՆԵՏԱՐԱՆԻ ՂՍԵՄՈՒԹՅՈՒՆԸ

«Եւ Յիսուս իրան հաւատացողներին ասաց. ե՞նէ Դուք իմ խօսքի մէջ կենար... ճշմարտութիւնը կը ծանաչէք, և ճշմարտութիւնը կազատէ Ձեզ» (Յովհ. Ը. 31):

Մի յայտնի ասացուած կայ, թէ մարդ իւր բնաւորութեամբ փիլիսոփայ է: Դրա միտքը այս է, թէ մարդս իբրև մտածող ու բանական արարած՝ որքան և յո՞ծ մտաւոր զարդացման աէր լինի, չի կարող չհետաքրքրուել մի քանի հարցերով, որոնց այս կամ այն լուծումը՝ իմաստասիրութիւն է: Սյոք հարցերն են՝ կեանքի իմաստը և մարդկութեան կոչումը:

Մարդկութեան սրտի ու մտքի այս յաւիտենական հարցերի լուծմամբ զբաղուել են մարդիկ խորին հետաքրքրուելով սկսած: Եզիպտոսի բուրգերի ստուերների տակ, իմաստասէր Ելլադայում, ընդարձակ Գանգէսի ափերի մօտ, Սրաբիայի կիզիչ երկնքի տակ, ապառաժ քառերի, պապիրուսի, պղնձեայ տախտակների, այժի ու ոչխարի կաշու վրայ

զրուած են բազմաթիւ մեծածաւալ զրքեր, առան-  
ձին իմաստասիրական խօսքեր, և զանազան տեսակ  
օրէնքներ, կանոններ ու խրատներ:

Հարիւրաւոր մեծամեծ հանճարներ իրանց բո-  
լոր ջանքը գործ են զրած, որ բայ անեն կեանքի փակ  
զիւրքը, լուծեն գոյութեան մութ առեղծուածք,  
բայց կեանքը առաջուան պէս սփինքսի նման պահ-  
պանում է խորին լուութեամբ իւր գաղտնիքը: Մին-  
չև Քրիստոս խնդրելի ճշմարտութիւնը իբրև մի  
զանձ փախչում էր մարդու իմացականութիւնից.  
մարդկութիւնը նրան այնտեղ էր որոնում, որտեղ  
նա չկար:

Մարդիկ զգում էին, որ առանց բարձրագոյն  
էակի կարելի չէ երեւակայել ոչ իրանց և ոչ էլ աշ-  
խարհի գոյութիւնը. բայց չին մարդկութիւնը Աս-  
տուծուն ներկայացնում էր աղաւաղուած կերպով:  
Յեթանոսական չին աշխարհը իւր քառասունդա-  
րեայ զարգացման շրջանում չկարողացաւ Փիղիքա-  
կան աշխարհից վեր բարձրանալ: չին ազգերի կրօ-  
նական աշխարհաչայեցողութիւնը Աստուծուն որո-  
նում էր տիեզերքի զանազանակերպութեան մէջ,  
երկնքի աստղերի, երկրի ուժերի մէջ: Պաշտում էր  
քաջ հերոսներին և նրանց աստուածների կարգը  
դասում: Աստուածութեան դաղափարը չափազանց  
ընկած էր: Մարդուց չէին պահանջում, որ իւր բա-  
րոյական ջանքերի շնորհիւ աստուածութեան բարձ-

րանայ, աստուածներն իրանք շողոքորթում էին  
մարդկանց:

Քսենոփոն Կոլոփոնացին սաստիկ զայրանալով  
ասում է, թէ ամեն ազգ իւր նմանութեամբ է ստեղ-  
ծում իւր աստուածներին. Թրակացին նրան պատ-  
կերացնում է խարտեաշ ու կապտակն, այն ինչ Ե-  
թովպացին՝ սև ու տափաքիթ:

Այս տեսակ կրօնական կոպիտ նիւթականու-  
թիւնից անպայման հետևում էին և կոպիտ բարոյա-  
կան օրէնքները. հեշտասիրութիւնը արմատացած  
էր կեանքի կենդրոնում, այն է՝ կրօնական հայեցա-  
կէտի մէջ: չին ազգերի կրօնները այսպիսի հեշտա-  
սիրական սկզբունքներով տողորուած լինելով՝ հար-  
կաւ աւելի խրախուսում էին մարդկային ախտասէր  
հակումները, քան թէ նրանց դիմադրում: Ինչպէս  
որ կրօնը բնութեան ուժերի աստուածացումն էր,  
այնպէս էլ նրա բարոյականը—մարդու բնածին ախ-  
տասէր հակումների օրինացումը:

Ազգերը միմիանց հետ միշտ կռուի մէջ էին.  
Եզդիպտացին իւր բուրգերի գազաթից գոռոզու-  
թեամբ էր նայում իրան շրջապատող երկիրների  
վրայ. Աբրահամի սերունդը—Եբրայեցիք, համարե-  
լով իրանց Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ, ատում  
էին քնայեալ ազգերին՝ իբրև Աստուծոյ մերժուած-  
ների. նրբացած ու լուսամիտ Յոյնը միւս ազգերին

բարբարոս էր կոչուած, իսկ խստասիրտ հռովմայեցին ամէնքն իւր սրի աւար էր համարուած:

Բռնութիւնն ու ամարգի խստասրտութիւնը միշտ զգային յարաբերութիւններ չհիմնական օրէնքն էին կազմուած: Նուաճուած երկիրների խաղաղ բնակիչները ստրուկ էին դառնուած և առանց խրտրութեան յաղթողի անային անասունների կարգն էին դասուում՝ չնայելով անհատական ընդունակութիւններին, կրթութեան և իրանց անցեալ հասարակական դրութեան:

Յաղթողը վայելելով միլիոնաւոր ստրուկների աշխատանքը, իւր ժամանակը անց էր կայնուած խրախաճանութիւնների, ապականիչ անգործութեան և անմիտ շուայութեան մէջ: Չկար մի հեշտասիրական հաճոյք, որի մէջ չընկնէր այն ժամանակուայ կրթութուած ազգերի ամենաբարձր դասակարգը:

Ի՞նչ է ճշմարտութիւնը, ասուած էր արհամարհանքով հեթանոս աշխարհը: Արժէ՞ այսպիսի չնչին հարցերի համար աշխատել յողմել: Կեանքը կարճ է. շտապէնք քաղել զուարճութեան պտուղները. այս էին չին մարդկութեան դրօշակի խօսքերը. եթէ ժամանակ առ ժամանակ առանձին անհատների մէջ հարեկան պահանջներ էին զարթնուած, և բարձրագոյն ձգտումներ, որոնք չգտնելով իրանց իրազորման համար համապատասխան միջավայր՝ միայն ծանր անբաւականութիւն էին պատճառուած կեան-

քից: Սենեկա փիլիսոփան ասուած է. «Մարդուս բովանդակ կեանքը ողբալի է»: Մարկոս Աւրելիոս փիլիսոփայ կայսրն ևս բացականչուած է. «Մահ, մեզ հասնել մի՛ յապաղիր»:

Նրանք, որ չէին կարող հաշտուել բարոյական ապականութեան խեղդող ձթնոլորտի, ընդհանուր բռնութեան ու սարկութեան հետ, ապրուած էին այն յուսով, թէ կը դայ վերջապէս մի ժամանակ, երբ նոր կեանքի լոյսը կը տարածուի աշխարհիս վրայ: Նրանք սպասուած էին այդ օրուան, փափազելով փափազուած էին յաւիտենական ճշմարտութեան բարբառը լսելու, որ վերջապէս հնչուեց Յորդանանի ափերից «Եկէք ինձ ձօտ վշտացեալներ ու բեռնաւորեալներ և ես կը հանգստացնեմ Ձեզ»: Մարդիկ այս ձայնը լսելով՝ ճշմարտութեան ապարդիւն որոնումից յողնած՝ հազարներով գնացին նրա յետեից՝ արհամարհելով հալածանքները, տանջանքները և նոյն իսկ մահը:

Քրիստոսի փարդապետութիւնը մեծ հրդեհի նման ճարակել էր այն ժամանակուայ ամբողջ աշխարհը. նահատակների արեան հոսանքները, որ թափուած էին հալածիչների ձեռքով, չէին կարող նրան հանդցնել: Քրիստոնէութիւնը տարածուեցաւ երկրիս վրայ իբրև փառաւոր, հզոր ու անզուսպ հեղեղ: Աւետարանական սիրոյ օրէնքը առ Աստուած և առ մարդիկ փարոսի նման վառուեցաւ մարդ-

կանց զլուսւերի վերեւում և մարդկային կեանքի  
 թանձր խաւարի մէջ առաջնորդող ասող դարձաւ:  
 Հեթանոսական դարերի ընթացքում կազմակեր-  
 պուած կեանքի և նոր վարդապետութեան մէջ ե-  
 դած պատերազմը շատ խիստ էր, բայց քրիստոնէ-  
 ութեան բարոյականի ոյժը այնքան մեծ էր, որ  
 նրան ոչինչ չէր կարող դիմադրել:

«Աստուած հոգի է, և նրան երկրպագողները  
 պէտք է հոգւով ու ճշմարտութեամբ երկրպագութիւն  
 անեն» (Յովհ. Դ. 24), աւետեց աւետարանիչը և զրա-  
 նով առաջին անգամ բարձրացաւ Աստուածութիւնը  
 երկրից և նրա գաղափարը աշխարհից ու մարդկա-  
 յին կրգերից վեր, իսկ նրան ծառայելու իբրև ծա-  
 նապարհ ցոյց տուեց բարոյական կատարելութիւնը:

Աստուած հոգի է, ո՛չ թէ բնութեան զօրու-  
 թիւն, ո՛չ թէ աստուածացեալ հերոս, այլ անձնա-  
 կանութիւն, բարձրագոյն Սէր, բարձրագոյն ճշմար-  
 տութիւն, բարձրագոյն Սրբութիւն: Արդէն այս գա-  
 ղափարը միայն հզօրապէս բարձրացնում է մարդուս:

Փիղիքական աշխարհի հրապոյրները եղծուած  
 են. բնութեան վրայից հանուած է աստուածու-  
 թեան պսակը և նրան իւր տեղը տուած. նա մի-  
 այն աստղածուութեան մտքի մարմնացումն է: Մար-  
 դուս կենդանական պահանջները այժմ ներկայա-  
 նում են իբրև կոշտ նիւթականի ծառայութիւն:

նրանք մարդկային բնութեան մէջ չպէտք է տիրա-  
 պետեն: Մարդս կրում է իւր մէջը Աստուծոյ մի  
 մասը, իսկ Աստուած հոգի է, ուստի այսուհետև  
 մարդկանց համար ամենամեծ արժէք պէտք է հո-  
 դու պահանջներն ունենան:

Հոգւոր նպատակների, ճշմարտութեան ու բա-  
 րութեան բարձրագոյն ձգտումների համար մարդս  
 պարտական է հրաժարուել իւր մարմնական ամե-  
 նասիրելի ձգտումներից, նա պէտք է հրաժարուի  
 իւր կենդանական բնութեան զուարճութիւններից,  
 նոյնպէս և իւր ամենամտերիմ արիւնակիցներից,  
 եթէ սրանց պահանջները հակառակ են բարոյական  
 զգացմունքին: Ով որ ուզում է իմ յետևից դալ, ա-  
 սում է Քրիստոս, թող իրանից հրաժարուի: Ով որ  
 աւելի քան թէ ինձ, սիրում է իւր հօրը, կամ մօ-  
 րը, կամ դուստրը և կամ որդուն, ինձ արժանի չէ»:

Շատ անգամ մարդ ազահ, շահամոլ է լինում  
 և զուարճութիւնների ձգտում. զուարճանալ, տի-  
 րել, շտեմարանել—ահա այն ձգտումը, որ ապակա-  
 նում է մեզ, մեր հոգին և մեր մերձաւորներին:

Այս կէտին է վերաբերում Քրիստոսի խօսքը.  
 «Ինչ օգուտ կը լինի մարդուն, եթէ ամբողջ աշ-  
 խարհը շահի և հոգին կորսնցնէ»:

Աւետարանը յանձն է առնում այս վերջին  
 բարձր միտքը հասկացնել մարդկանց, զգալ տալ նրա  
 բովանդակ ճշմարտութիւնը և խոր իմաստը—ահա

իւր բարի հետեանքներով անչափ մի խնդիր, որ իրագործում է Աւետարանը:

Քրիստոսի աշակերտը բոլոր սրտով չպէտք է կապուի ոչ երկրի, ոչ մարդկութեան և ոչ էլ մի ուրիշ արարածի հետ. նրա միտքը ամբողջապէս դարձած պէտք է լինի դէպի երկնային Հայրը: «Ձեզ համար գանձեր մի՛ դիզէք երկրիս վրայ, ուր որ ցեցըն ու ժանկը ապականում են, և ուր որ զոգերը գողանում են. բայց ձեզ համար գանձեր դիզէցէք երկնքումը... վասն զի ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կը լինի և ձեր սիրտը» (Մատթ. Զ. 19—21): Մարդու սիրտը պէտք է անքակ պատկանի Աստուծոյ, իսկ երկու սէր մէկ սրտի մէջ կարող չեն բնակուել: «Ոչ ոք չի կարող երկու տէրերի ծառայել, որովհետեւ կամ մէկին պէտք է ատէ, իսկ միւսին սիրէ, և կամ մէկին պէտք է մեծարէ և միւսին արհամարհէ. չէք կարող ծառայել Աստուծոյ և մամոնայի» (Մատթ. Զ. 24):

Սակայն այս խօսքերը չեն նշանակում, որ Յիսուս դատապարտում է ամէն մի դործունէութիւն, որից առաջ է գալիս մասնաւոր ու հասարակական բարեկեցութիւն: Նա ինքն էլ հիւսն էր: Յիսուս դատապարտում է միայն այս աշխարհի բարեքններին սրտով կապուելը, երբ աշխարհային հոգսերը ամբողջովին կլանում են մարդու, և սրտիցը դուրս են ձգում ուրիշ մտքեր ու ձգտումներ: «Ուստի,

ասում էր Քրիստոս ժողովրդին, խնդրեցէք նախ և առաջ Աստուծոյ արքայութիւնը և նրա արդարութիւնը, և այդ ամէնը կը տրուի ձեզ»:

«Աստուած չի բնակում ձեռագործ տաճարների մէջ և չի պահանջում մարդկային ձեռքերի ծառայութիւնը» (Գործք Ժէ 24—25). նրան հարկաւոր չեն ոչ պարարտ ողջակէզներ, ոչ բուրվառի բուրմունքներ, ոչ սեղաններ՝ ոսկով ու թանկագին քարերով զարդարուած. չի պահանջում ոչ ճնրագրութիւն, ոչ ուխտ, ոչ պահք: Եթէ այդ ամէնը ունինք, մեզ համար է իբրև միջոցներ, որ մեր շէրմեռանդութիւնը կարող են զորացնել: Իսկ Աստուծոյ աչքի առաջ արժէք ունի «մարդու սիրտը, որ ոսկուց մաքուր է, և կամքը որ բարւոյ մէջ զորաւոր է»:

Աստուծոյ բնդունելի չէ մինչև անգամ մեր ազօթքը, եթէ ճշմարտութեամբ ու սիրով պայծառացած սրտից չի բղխում. «Եթէ մատուցանես սեղանի վրայ քո բնձան, և այնտեղ յիշես, ասում է Քրիստոս, թէ քո եղբայրը քեզ դէմ մի բան ունի, թող այնտեղ քո բնձան, և դնա առաջ հաշտուիլ քո եղբոր հետ, և ապա եկ բնձադ մատուցրու» (Մատթ. Ե. 23—24):

Քրիստոսից առաջ մարդիկ այս տեսակ խօսքեր երբեք չէին լսած: Աւետարանը առաջինը տուեց աշխարհիս մի այնպիսի բարձր ու կատարեալ

զաղափար, և մարդկութեան առաջ դրեց մի այնպիսի բարձր ձգտումն, որ երբեք կարող չէ իրագործուել բայց որին մօտենալով մարդկութիւնը աւելի և աւելի մաքուր, բարոյական ու կատարեալ է դառնում: Այստեղ ոչ թէ Աստուածութիւնն է խոնարհվում դէպի մարդս, այլ մարդս պարտաւորվում է բարձրանալ դէպի ամենակատարեալ էակը:

Վաճառեցէք ոչ-քրիստոնեայ արեւելքի հոգեւոր անշարժութիւնը Աւետարանի լուսով պայծառացած արեւմտեան ազգերի կեանքի յառաջադիմութեան հետ, և հարկադրուած կը լինիք խոստովանելու, թէ քրիստոնէութիւնը նրա ոգին է, որ հասարակական զարգացման հիմնական սկզբունքն է կազմում: Աւետարանը՝ կոչելով Աստուծուն Սէր և բոլոր մարդոց ճայր հիմք դրեց ընդ հանուր մարդկութեան եղբայրութեան, կործանեց միջազգային պարիսպները, վերցրեց սարուկներին կաշկանդող շղթաները, պարտաւորեց մարդու բարոյական արժանաւորութիւնը յարգել՝ ինչ ցեղից կամ ինչ դասակարգից էլ որ լինի նա: «Այսուհետեւ չպիտի լինի ոչ Եբրայեցի, ոչ Հելլէն, ոչ սարուկ, ոչ տէր, ոչ այր և ոչ կին—որովհետեւ ամէնքը հաւասար են ի Քրիստոս»: Այսպէս էր զրում հեթանոսների մեծ առաքեալը՝ այսպիսի խօսքերով մարդկային պատմութեան նոր դարազրուիւր բանալով:

Քրիստոնէութեան ընդունած սկզբունքը, թէ մար-

դիկ հաւասար են Աստուծոյ առաջ, վճռողական ու անհնչելի ազդեցութիւն գործեց Եւրոպական քաղաքակրթութեան վրայ: Նա հետզհետէ հարթեց և հարթում է մարդկանց անհաւասարութիւնը, և շուտով ստրկին աւելի բարձր դրութեան հասցրեց՝ ներշնչելով նրան բնածին արժանաւորութեան զգացմունք:

Բարձր ու հարուստ դասակարգերը սկսում են համոզուել, թէ իրանց վայելած արտօնեալ դրութիւնը իրաւացի չէ, ուստի հրաժարվում են իրանց արտօնութիւններից և համաձայնում են իրանց աւանձնական իրաւունքները ուրիշներին ևս տալ: Այս մի զարմանալի իրողութիւն է քրիստոնեայ ազգերի պատմութեան մէջ, և Քրիստոսից առաջ կարող չէր տեղի ունենալ:

Բայց ի՞նչ է պատճառը, որ բախտի ընտրեալները սկսում են իրանց կրտսեր եղբայրներին յարգել, դուր զգալ դէպի թշուառ, բախտի խորթ որդիները:

Նախ և առաջ Աւետարանի մարդկանց հաւասարութեան և հոգու փրկութեան վարդապետութիւնն է այդ երեւոյթի պատճառը: Այն հաւատը, թէ ամենից խեղճ և ամենից թշուառ մարդու մէջ էլ կայ անմահ հոգի, որ ստեղծուած է Աստուծոյ նմանութեամբ և կոչուած է յաւիտենական երանութեան և որը փրկելու համար Յիսուս իւր ա-

րիւնը թափեց, այս հաւատը հարկադրուած է մեզ  
ամէն մի ճարտ մեր եղբայրը համարել յարգել նրան.  
նա թոյլ չի տալիս մեզ նրա բարօրութիւնն ու ար-  
ժանաւորութիւնը արհամարհելու: «Նայեցէք, մի  
արհամարհէք այս փոքրներից ոչ ոքին» ասում է  
Քրիստոս (Մատթ. Ժբ. 10):

Ձրկեցէք այս հաւատից, և ճարտը ճարտու-  
հատը կը դադարի եղբայր լինելուց: Նա կը դառ-  
նայ մեծ գուժարի մէջ մի թուանշան, ահագին մե-  
քենայի մի աւելորդ անիւր, որոնց արժէքը չափ-  
վում է իրանց բերած օգուտով, և ինքն ըստ ին-  
քեան նօքա ոչ մի արժէք չունին:

Մի այսպիսի օրինակ առէք: Դիցուք մի հան-  
ձարեղ գիտնական, հեղինակ կամ արուեստագէտ—  
Պաստէօրը, Շէքսպիրը կամ Մուրիլիոն— ազատում  
է մի քանի շինական ճարտիկ կամ կանայք, և նրանց  
ազատելով ինքը մեռնում է: Վաճառականական հա-  
շուի տեսակէտով այս մի անմիտ դործ կը լինէր. մի  
քանի կոշա ու կոպիտ շինական կեանքերի փոխա-  
նակ համաշխարհային հանձարը զոհուեցաւ. հազ-  
ուադիւտ խաղ ունեցող ադամանդի փոխարէն մի  
բուռն սև հինգ կոպէկանոցներ ստացանք:

Աւետարանի վարդապետութեան տեսակէտից՝  
այդ կը լինի մի մեծ գործ, բարձրագոյն սիրոյ ար-  
տայայտութիւն: «Չկայ աւելի մեծ քան այն սէրը,

ասում է Քրիստոս, երբ ճարտը իւր մերձաւորի հա-  
ձար իւր կեանքն է զոհում» (Յովհ. Ժե 13):

Գիտութիւնը չէ կարող այսպիսի հայեացք ա-  
պացուցանել, և յաճախ չի համաձայնում ընդունել,  
որ ճարտիկ հաւասար են: Լէտուրնոն, Պարիզի ազ-  
գազրական ընկերութեան անդամը, ասում. «Մարդ-  
կային ցեղերի մէջ մի յայտնի կարգ կայ... իրանց  
կազմութեամբ ճարտկային ցեղերը շատ տարբեր են.  
մինչդեռ մի քանիսը իսկապէս արժանի են ընտրեալ  
անունն, միւսները՝ առանց որևէ սարակուսի,  
կազմում են մերժեալ ցեղերի կարգը»:

Ուստի Կիզըր ասում է. «Մարդկային հաւա-  
սարութեան դադափարը, որ այնքան մեծ դեր է  
խաղում մեր քաղաքակրթութեան զարգացման մէջ,  
մտքի իմացականութեան պտուղ չէ. իմացականու-  
թիւնն ու փորձը չեն նրան հաստատում, այլ նա  
հետեանք է այն կրօնական բարոյականութեան, որի  
վրայ մեր քաղաքակրթութիւնն է հաստատուած»,  
այն է՝ քրիստոնէութեան:

Մի խօսքով՝ քրիստոնէութիւնը ոչ թէ միայն  
անհատ անձնաւորութիւնների վերաճնութեան ազ-  
բիւր է, այլ և ամբողջ ճարտկութեան համար բա-  
րիք է, քաղաքակրթութեան ու յառաջադիմութեան  
հիմնական ոյժն է:

Առէք ամենաբարձր, ամենապայծառ, անձնա-  
նուէր ու ազնիւ բարերարների ու առաջնորդների

ցանկութիւնները. բաղմապատկեցէք որքան անդամ  
և կամենաք, բայց դարձեալ զրանք չեն տալ այն-  
քան գրաւիչ ապագայ, ինչ որ յոյց է տուած Աւե-  
տարանը, այն է՝ Աստուծոյ արքայութիւնը երկրիս  
վրայ:

Եթէ լաւ հասկանանք Քրիստոսի Աւետարանի  
իմաստը, այն ժամանակ կը տեսնենք, որ մարդկու-  
թիւնը չունի և չպիտի ունենայ աւելի բարձր խրն-  
դիր, քան ինչ որ Աւետարանն է առաջարկում.  
«Խնդրեցէք նախ Աստուծոյ արքայութիւնը և նրա  
արդարութիւնը»:

Ե.

### ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

«Եկեսցէ արքայութիւն քո»:

Աստուծոյ արքայութեան մասին ընդհանրա-  
ցած հասկացողութիւնը շատ անգամ շատ մութ է,  
և յաճախ բոլորովին աղաւաղուած: Ամէն մի քրիս-  
տոնեայ իւր մատաղ հասակից այդ բառը զիտէ:  
Դեռ կարգալ չիմացած՝ բերանացի սովորում ենք  
մեծերից տէրունական աղօթքը և կրկնում. «Եկես-  
ցէ արքայութիւն քո»: Յետոյ Աստուծոյ արքայու-

թեան մասին միշտ լսում ենք եկեղեցում, կարդում  
ենք տանը սովորում ենք դպրոցում:

Աւետարանի մէջ ոչ մի բանի մասին այնքան եր-  
կար ու բարակ չի խօսվում, որքան Աստուծոյ ար-  
քայութեան մասին. դա է Յիսուսի վարդապետու-  
թեան էական կէտը, մի միտք, որ Աւետարանի ա-  
մէն մի էջում աւելի ընդլայնվում, պարզվում է: Ա-  
ւետարանի մէջ չկայ ոչ մի բառ, ոչ մի գործ, որ  
Աստուծոյ արքայութեան հետ կապ չունենայ: Քրիս-  
տոսի քարոզութեան նոյն իսկ նպատակն է՝ աւե-  
տել Աստուծոյ արքայութիւնը և նրա նշանակու-  
թիւնը բացատրել: Երբ լեռան վրայ ուսուցանում է  
ժողովրդին, Աստուծոյ արքայութեան օրհնքներն է  
քարոզում. իսկ լճի ափին խօսելով ժողովրդի հետ՝  
առաւինելով պատկերացնում է Աստուծոյ արքայու-  
թեան գաղտնիքները, նրա սկիզբը, զարգացումը,  
ապագայ մաքառումն ու յաղթանակը: Երբ Յիսուս  
աղօթում է և մեզ աղօթել է սովորեցնում, խնդ-  
րում է որ Աստուծոյ արքայութիւնը գայ:

Ընտրելով իւր առաքեալներին՝ Քրիստոս յոյց  
է տալիս, թէ իւր հաստատած Արքայութիւնը  
պէտք է շարունակուի ու տարածուի բոլոր մարդ-  
կութեան մէջ: Սյլակերպուելով իւր մի քանի աշա-  
կերտների առաջ՝ նա յոյց է տալիս, թէ մարդկա-  
յին էութիւնը ինչ կերպարանք է ստանում Աս-  
տուծոյ արքայութեան մէջ: Իւր յարութեամբն ևս

մեզ հասկացնում է, որ դժոխքի բոլոր զորութիւնները, բռնակալների տեական շարութիւնը և փաբիսեցւոյ ասելութիւնը չեն կարող նրա արքայութիւնը խորտակել: Մի խօսքով՝ Գրիստոսի վարդապետութիւնը ամբողջապէս պարունակվում է Աստուծոյ արքայութեան գաղափարի մէջ. այդ է նրա փառքը, նրա երկրաւոր կեանքի խորհուրդը, նրա աստուածային միաբնութիւնը:

Ապա ուրեմն պարզ է, որ անկարելի է քրիստոնեայ կոչուել, և հեղինակաւոր կերպով Աւետարանի մասին դատողութիւններ տալ՝ առանց բնաւ որոշ ու պայծառ գաղափար ունենալու, թէ ի՞նչ է Աստուծոյ արքայութիւնը: Այդ միենոյնը կը լինէր, եթէ մէկը իրան փիլիսոփայ համարէր և Պղատոնի, Արիտոտէլի, Կանտի ու Տեդէլի մասին գաղափար չունենար: Բայց շատ մարդիկ կան, որոնք շերմեռանդութեամբ կարդում ու բացատրում են Աւետարանը, և միենոյն ժամանակ շատ մութ ու սխալ հասկացողութիւն ունին Աստուծոյ արքայութեան մասին:

Նախ և առաջ Աստուծոյ արքայութիւնը, որ Աւետարանի մէջ յաճախ յիշատակվում է, շփոթում են երկնքի արքայութեան հետ, այսինքն՝ հանդերձեալ կեանքի հետ, և կարծում են որ Աստուծոյ արքայութիւն և Երկնքի արքայութիւն միենոյն է: Ուստի շատ անգամ մեղադրում են քրիստոնէու-

թիւնը, ասելով թէ նա քարոզում է արհամարհելի երկրային բարեքները, ընկձել բռնորէն մարմնի բռնական պահանջները, և այսպիսով ձգտում է կեանքը պայծառ ու զուարթ գոյներից զրկել: Աւետարանը, ասում են, առհասարակ այդպիսի դէպքերում մարդու հայեացքը բացառապէս դէպի երկինք է դարձնում. նա մոռանում է, որ մարդս հողից է ստեղծուած, և սերտ կապուած նիւթական աշխարհիս հետ, և այդ անկարելի է ինկատի չառնել:

Մինչև անգամ թռչունները, որոնց ակնարկում է Աւետարանը, իրանց բոյներն են շինում, և հողս տանում իրանց ձագերի մասին: Կարճ էնք արդեօք մենք, որ թռչուններից շատ անգամ աւելի պիտոյքներ ունինք, չհողալ մեր մարմնական պահանջների մասին. մի այսպիսի պահանջի վրայ պընդելը բնութեան հակառակ դնալ է՞ աւելորդ խրտութեամբ անկարելին պահանջելով:

Պայծառ արեգակը մեզ տաքացնում է, դաշտերի բուրմունքը մեզ արբեցնում, աստղերի պրսպողումը զմայելցնում, և սոխակի դայլայլիկը մեզ հիացնում է. միթէ գեղեցկութեամբ առատորէն լցուած բնութեան մէջ զուարճանալը, և աշխարհի բարեքները վայելելը յանցանք է. ինչո՞ւ համար են ապա ստեղծուած, ինչո՞ւ համար մեր մէջ պէսպէս հակուժներ են հաստատուած:

Այս ամէնի միակ պատասխանը այս է. այս

բոլոր համոզիչ ապացոյցները չեն վերաբերում Աւետարանին, որովհետեւ Աւետարանը զրանց հակառակ չէ:

Նախ և առաջ Աւետարանի մէջ պարզ որոշուած է, թէ ի՞նչ է Երկնքի արքայութիւնը և Աստուծոյ արքայութիւնը: Քրիստոս խօսելով արդարների հանդերձեալ կեանքի մասին, ասում է. «Սյն ժամանակ թագաւորը կասէ իր աչ կողմիններին, Եկէք, ով իմ հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը» (Մատթ. Իե. 34):

Իւր հրաժեշտի ողջոյնը ասլով աշակերաններին և քաջալերելով չվախենալ առաջիկայ անշատումից՝ Յիսուս ասում է. «Թող չվհատի ձեր սիրտը. իմ հօր տան մէջ շատ օթեւաններ կան, ապա թէ ոչ կասէի ձեզ, ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու» (Յովհ, ԺԳ 1—2): Երկու հատուածների մէջ ևս պարզ կերպով ցոյց է տրվում, որ Երկնքի արքայութիւնը, փառքի արքայութիւնը արդէն պատրաստ կատարուած փաստ է. իսկ Աստուծոյ արքայութիւնը, որի մասին Յիսուս խօսում է իւր առաջիններում, աղօթքի մէջ և մարդկութեան վերջնական նպատակը որոշելիս՝ իւր ամբողջութեամբ դեռ չէ հասել. նրա կատարեալ իրագործումը քիչ թէ շատ հեռաւոր ապագայի գործ է:

Աստուծոյ արքայութիւնը հիմնուած լինելով

Քրիստոսի ձեռքով՝ դեռ ևս պէտք է կառուցուի, դեռ ևս պէտք է դայ. «Եկեացէ արքայութիւն քո»: Չենք ասում, թող ստեղծուի քո արքայութիւնը, այլ թող դայ, որովհետեւ հիմքը արդէն զրուած է, բայց նա դեռ տարածուած չէ բոլոր մարդկութեան մէջ և իւր սահմաններում մեզ չէ պարփակել: Մենք դեռ ևս նրա սահմաններից, նրա օրէնքների բարձրքիչ ազդեցութիւնից դուրս ենք: Նա կը դայ, երբ մեր աշխարհաստեղծութիւնը աւետարանական ոգւով ներշնչուած կը լինի, երբ մեր կեանքի ամբողջ կազմը համապատասխան կը լինի աստուածային ճշմարտութեան պահանջներին:

Նա կը դայ այն մարդոց համար, որոնք ճշնշուած են իրականութեան կեղտից, և սպասում են ճշմարտութեան ու բարութեան ծաղկելուն, ծառաւ ունին ճշմարտութեան և փափագ՝ չարութիւնը յաղթահարելու:

Եթէ այս ձգտումներով ներշնչուած լինի մի շրջան միայն, Աստուծոյ արքայութիւնը միմիայն այդ շրջանի համար եկած կը լինի. իսկ եթէ նրանցից ոչ ոք չի ներշնչուի ամբողջ մարդկութիւնը, Աստուծոյ արքայութիւնը ամէնքի համար կը դայ: Իսկ եթէ այդպիսի անհատներ միայն գտնուին, միայն նրանք Աստուծոյ արքայութեան նպատակները կը լինին: Իսկ ով որ երջանիկ է և բուական երկրի վրայ տիրապետող անիրաւութիւնից, որ իւր եսասիրու-

Թիւնն ու կրքերը ամենից բարձր է դասում, որ բարձրագոյն ձգտումների վրայ ծիծաղում է, որ իրան անհասկանալի են, այդպիսի անձի համար Աստուծոյ արքայութիւնը անհասանելի է, որովհետեւ այդ արքայութեան զրօշակն է՝ վերջնականապէս ոչնչացնել չարութիւնը մարդկային սրտերում:

Երբ Քրիստոս իւր քարոզութիւնը սկսեց՝ իւր մտաւորական աչքով դիտելով տիեզերքի կեանքը՝ հետեւեալ կերպով գնահատեց նրան բարոյականութեան տեսակէտից. «Աշխարհս գանձում է չարութեան մէջ» (Ա. Թուղթ Յովհ. Ե. 19):

Այդ չարութեան հետ մաքառելը, նրան տապալելը, և նրա տեղը Աստուծոյ արքայութիւնը հաստատելը Փրկչի զլխաւոր դործը եղաւ. «Իուք որ հեծեծում էք անարդարութեան ու անօրէնութեան լծի տակ, կարծես ասում էք Քրիստոս, իմացէք որ ձեր ստեղծած կեանքը չի կարող տալ ձեր խնդրած ու կարելի երջանկութիւնը. չարութիւնից միայն չարութիւն առաջ կը գայ, իսկ ճշմարիտ երջանկութիւնը, բարձրագոյն երանութիւնը՝ բարի է, որ միայն սիրոյ ու բարւոյ ծնունդ է: Եթէ ուզում էք գանել նրան, եթէ ծանրաբեռնուած էք աշխարհիս տիրող չարութեան լծով՝ եկէք ինձ մօտ և սովորեցէք ինձանից. իմ խօսքերս բուժիչ հիւթի նման կը զուարթացնեն ձեր ամնչուած հիւանդ սրտերը. ես ձանապարհ ցոյց կը տամ, որ ձեր հոգուն հան-

դատութիւն կը բերէ. նուիրեցէք ձեր անձը իմ վարդապետութեան, զնայէք այն ուղիով, որ ես բացել եմ ձեր առաջ, առէք ձեր վրայ իմ լուծը, և դուք կը տեսնէք, որ իմ լուծը քաղցր է, և բեռը — թեթեւ: Երկարատե թանձրախաւար զիշերից յետոյ սկսեց պայծառ օրուան արշալոյսը բացուել, երբ ես աշխարհ մտայ. մինչև այժմ տիրող անիրաւութեան մէջ, իբրև մի կայծ, մի քանի բնորեալների սրտում թաքնուած էր մի բարձր լոյս, թէ մի լաւ սպազսց կը գայ: Այժմ այդ պէտք է իրադործուի: Ժամանակի լրումն եղաւ: Մօտեցել է Աստուծոյ արքայութիւնը: Նա մօտ է. նա սյստեղ է, ձեր մօտը, ձեր շուրջը, միայն անհրաժեշտ է, որ ներս մտնի և տիրէ ձեր սրտին իբրև ամեն տեսակ դործունէութեան աղբիւր, և մարդկային կեանքը զեկալարող սկզբունք: Մաքրեցէք և պատրաստեցէք ձեր սրտերում Աստուծոյ համար տեղ. ձեր կեանքում բարիին ու ճշմարտութեան տեղ տուէք. ազատուցէք ձեզ տիրող ստից, բռնութիւնից ու եսականութիւնից. ապաշխարեցէք»:

«Ապաշխարեցէք» — ահա այն առաջին խօսքը, որով Աւետարանը մարդկութեան դարձաւ: Նախ և առաջ ապաշխարել է հարկաւոր, որովհետեւ առանց ապաշխարութեան չի կարող Աստուծոյ արքայութիւնը գալ: «Եթէ չապաշխարէք, ասում է նոր-

կեանքի աստուածային վարդապետը, չէք կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել» (Յովհ. Գ. 5):

Անհրաժեշտ է երկրիս վրայ մի ուրիշ կեանք, բոլորովին տարբեր այն կեանքից, որ մարդիկ վարում են, և որի լծի տակ իրանք հեկեկում են: Բռնութիւնը, անարդարութիւնը, կամայականութիւնը, կոշտ ու կոպիտ կրքերի տիրապետութիւնը անհրաժեշտ ու անպարտելի ոյժեր չեն: Սրանց հակառակ մարդկային բնութեան մէջ, գոնեա թաքուն, հաստատուած են բարի, բարձր, սուրբ զգացմունքներ, եղբայրութեան, անձնանուէր սիրոյ, բարութեան և բարոյական կատարելութեան զգացմունքներ: Եթէ փոխանակ աստիճանաբար նրանց խեղդելու ընդհակառակը նրանց վարժեցնենք, զարգացնենք, զօրացնենք մեր հողում, նրանք մեր կեանքը սքանչելի լուսով կը պայծառացնեն: Կեանքը անձանաչելի կը դառնայ. չարութեան թագաւորութիւնը տեղի կը առայ սիրոյ զօրութեան:

Աստուծոյ արքայութիւնը ամէն բոլոր կարող է գալ հաստատուել երկրիս վրայ, բայց մարդիկ, ինչպէս որ նրանք կան, նոր կեանքի համար պատրաստ չեն. նրանք պէտք է հոգևով վերանորոգուին: Հարկաւոր է, որ նրանք արմատախիլ անն իրանց հայեայքները, զգան իրանց ձգտումների ոչնչութիւնը, ներշնչուին նոր հոգևով, որ է՝ աւետարանական սէր, քրիստոնէական խաղաղարար խոնարհութիւն,

և անդուսպ ու անյագ ձգտումն դէպի ճշմարտութիւն:

Որպէս զի կեանքը հիմնաւորապէս փոխուի և Աստուծոյ արքայութեան դառնայ, հարկաւոր է պարզ ըմբռնել Աւետարանի վարդապետութեան ոգին, արհամարհանք զգալ դէպի նախկին կեանքը, որ հիմնուած էր բիրտ կրքերի ծառայութեան վրայ, որ հարկաւոր է հոգու բարձրագոյն պահանջներին բաւականութիւն գտնելու ծարաւ:

Այս միտքը պարզ հասկանալու համար օգտակար է ինկատ առնել Քրիստոսի խօսակցութիւնը Նիկոդիմոսի հետ: Երբայեցուց իշխաններից մէկը, Նիկոդիմոս անունով զիշերով Յիսուսի մօտ եկաւ և ասաց. «Ռարբի, զիտենք, որ դու Աստուծուց ուղարկուած վարդապետ ես, որովհետեւ այն հրաշքները, ինչ որ դու գործում ես, ոչ ոք կարող չէ գործել, եթէ Աստուած նրա հետ չլինի»: Յիսուս պատասխան տուեց նրան և ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. ով որ ծնած չլինի ի վերուստ, չի կարող Աստուծոյ արքայութիւնը տեսնել» (Յովհ. Գ. 1—2 յ):

Եթէ այս խօսակցութեան վրայ լաւ մտածենք, և Նիկոդիմոսի ու Յիսուսի խօսքերը համեմատենք, կը տեսնենք, որ Յիսուսի խօսքերը Նիկոդիմոսի հարցի պատասխանը չեն, նրա մտքերի զարգացումը չեն, այլ ընդհակառակն՝ Յիսուս խիստ կերպով ընդ-

հատում է Նիկողիմոսի հարցը, նրան բողոքովին հակառակ ընթացք է տալիս: Նիկողիմոս ասում է. «Թէև իմ ընկերակից փարիսեյիները ասում են քեզ, հակառակ են քո քարոզութեան, բայց ես չեմ կարող չխոստովանել, որ դու աստուածային վարդապետ ես. չեմ կարող չխոնարհել քո առաջ: Ի՞նչ հրաշքները ինձ համոզում են, որ դու Աստուծուց ես ուղարկուած. ես քո աշակերտն եմ, և եկել եմ այդ խոստովանելու»:

«Եթէ այդպէս ես մտածում, ընդհատեց նրա խօսքը Յիսուս, չեմ կարող քեզ ինձ աշակերտ ճանաչել». դու տեսար, կարծես ասում լինի Քրիստոս, իմ հրաշքները, բայց հասկացել ե՞ս արդեօք իմ խօսքերի խոր իմաստը, սրտի անձկութեամբ եղել ես արդեօք ուշադիր իմ դէպի Աստուծոյ արքայութիւնը կոչելուն. դողում էր արդեօք հոգիդ դժայլելով երկրիս վրայ հաստատուելիք սիրոյ, ճշմարտութեան ու բարութեան պատկերի առաջ. բորբոքվում էր արդեօք քո սիրտը ամենայն ինչ զոհելու ցանկութեամբ, պատրաստ էիր հրաժարուելու ամենաթանկագին սիրելիներդդ, արիւնակիցներից իմ խօսքերը իրազօրծելու համար: Եւ այժմ արդեօք դզում ես մի նոր զգացմունք, նոր տրամադրութիւն, այն է՝ ցանկալ հրաժարուելու ամբողջապէս ատելի անցեալից և անձնանուիրաբար նոր կեանք սկսելու: Ես չեմ եկել հրաշքներով մարդկանց մարերը

չլայցնելու, այլ վարդապետելու և իմ կեանքի օրինակով ձեր սրտերը դէպի Աստուծոյ արքայութիւնը դրաւելու: Ի՞նչ նպատակն է՝ մարդկանց չար ու ապականուած կամքն ընկձել և նրանց մասնաւոր ու հասարակական կեանքը բարձրագոյն բանակաւորութեան ու բարձրագոյն Սիրոյ, այն է՝ Երկնաւոր չօր կամքին հպատակեցնելու: Ոչ ամէն ոք, որ ասում է, «Տէր, Տէր» Աստուծոյ արքայութիւնը կը մտնի, այլ նա միայն, որ Երկնաւոր չօր կամքն է կատարում (Մատթ. Լ, 21): Հասկացել ես արդեօք այս ամէնը. Ով որ ուզում է ինձ աշակերտել, պէտք է հրաժարուի ամէն կեղտոտ ու չար արարքներից, և մաքրուած, բարձր հոգևով ներշնչուած նոր կեանք մտնի: Ծշմարիտ եմ ասում քեզ, ով որ չէ ծնուած ի վերուստ, չի կարող Աստուծոյ արքայութիւնը տեսնել» (Յովհ. Գ. 3.):

«Ի՞նչ է լսել էք, որ առաջիններին ասուած է, ասում է Յիսուս, մի սպանիր, մի զրկիր մարդուն կեանքից. իսկ ես ասում եմ ձեզ, մի՛ վրդովիր քո մերձաւորին իզուր բարկութեամբ, զգոյշ եղիր խօսքով անգամ նրան վիրաւորելուց, նրա արժանաւորութիւնը պրդծելուց: Ի՞նչ է լսել էք, որ ասուած է, մի՛ շնար. մի՛ դարձրու քո մարմինը, որ ս. հոգու ընդունարան է լինելու, վատագոյն կրքերի ծառայելու գործիք. իսկ ես ասում եմ ձեզ, զգոյշ եղէք մինչև անգամ կեղտոտ մտքերից, ձեր հայեացքը դարձրէք այն ամէ-

նից, որ ձեր մտքերի մաքրութիւնը կարող է ապահանել: Դուք զիտէք, որ նախնեաց ասուած է, կատարի՛ր Աստուծոյ առաջ առած երդումներդ, զոչոչեղիր և պահպանի՛ր նրանց. իսկ ես ասում եմ ձեզ, որ սրբութեամբ կատարէք ձեր ամէն մի խօսքը: որ առանց երդման էլ միշտ ճշմարիտ խօսէք, եթէ այո—այո. և թէ ոչ—ոչ:

Դուք լսել էք, որ ասուած է. աչքը աչքի տեղ, և առամբ առամբ տեղ, այսինքն՝ եթէ քո մերձաւորից վրէժ ես առնում, աւելի վրէժ մի՛ առնիլ, մի՛ պատճառիլ խոցի տեղ մահ, վիրաւորանքի փոխանակ՝ եօթանասուն և եօթն անգամ (Մտնդ. Գ. 24), այլ վէրքի տեղ վէրք, և խոցի տեղ խոց: Իսկ ես ասում եմ, չարիքի փոխարէն չարիք մի պատճառէք. ով որ աչ թշիղ սպտակ տայ, մի՛ անիր միւկնոյնը նրան, այլ առանց զրդուիչ վրդովմունքի, առանց վիրաւորիչ յանդիմանութեան ինքդ քեզ յանձնէ վիրաւորողի կամքին: Եթէ մարդ չարի փոխարէն վրէժ է պահանջում, աւելայնում է չարիքը և թշնամութեան բոցը բորբոքում. իսկ հեղութիւնն ու անյիշաչարութիւնը զինաթափ են անում ատելութիւնը, խղաղեցնում են բարկութիւնը:

«Դուք լսել էք, որ ասուած է. սիրէ՛ ընկերիք և ատիր թշնամուդ. իսկ ես ասում եմ ձեզ, սիրեցէք բոլոր մարդկանց, և միայն նրանց չար գործերը ատեցէք. հալածեցէք չարութիւնը, խորաակեցէք

խաբեբայութիւնը, հարուածեցէք բռնութիւնը փարիսեցիութիւնը իբրև դժօխքի ծնունդ, և խղճացէք նրան, որոնք այդ բոլորին ծառայում են: Հալածողները աւելի անբախտ են քան հալածեալները, Աստուծոյ արքայութիւնը նրանց անմատչելի է, նրանց սիրտը քարացած է և միտքը խստացած: Նրանք չզիտեն, թէ ի՛նչ են գործում. աղօթեցէք նրանց համար և բարի գործեցէք, որոնք ձեզ ատում են»:

Ահա այս է մի քանի խօսքով Քրիստոսի վարդապետութեան բովանդակութիւնը: Եթէ դա մարդու մէջ մարմին ու արիւն չդառնայ, և նրա հոգութիւնը չվերափոխէ, նրա համար կեանքի աղբիւր չդառնայ, և աղբիւրի նման չբխի, այդպիսի մարդուն Աստուծոյ արքայութիւնը անմատչելի կը լինի:

Աստուծոյ արքայութեան պատմութիւնը, իսկապէս ատած, մարդու հոգու պատմութիւնն է. նա ծնվում է մարդկային սրտի խորքերում և պէտք է նախ և առաջ արմատանայ: Աստուծոյ արքայութեան վիճակի համար արտաքին պայմանները երկրորդական նշանակութիւն ունին. նրա ծագումն ու զարգացումը նախ և առաջ կախուած է մարդուներքին յատկութիւններից: Հարկաւոր է յայտնի բարոյական նախապատրաստութիւն: «Ոչ ոք, ասում է Յիսուս, չի կարող ինձ մօտ գալ, եթէ նրան հայ-

ըր չկոչէ») (Յովհ. 2, 44). այսինքն եթէ նա ձրգ-  
տումն դէպի չայրը չունի:

Շատ անգամ ամենալաւ պայմաններում զրտ-  
նուող մարդիկ չեն ընդունում ճշմարտութիւնը. ընդ  
հակառակն մի ուրիշը, որ նրան ընդունելու վերա-  
բերմամբ ամէնից անյարմար պայմանների մէջ է զր-  
տնվում, բմբռնում և անձնատուր է լինում նրան:  
Այս ճշմարտութիւնը լաւ է պատկերացած սեր-  
մնացանի առակում (Մատթ. Ժգ. 3—8): Սերմնա-  
ցանը համարձակ ցանում է սերմը դաշտում. սերմը  
հաւասարապէս լաւ է. բայց հետեանքը զանազան է  
գուրս դալիս: Ճանապարհի վրայ ընկած սերմը չը-  
կարողացաւ հողի մէջ մտնել և ոտնակոխ եղաւ. բա-  
րի վրայ ընկածը թառամեցաւ, տատակի մէջ ըն-  
կածը խեղդուեցաւ և միայն չորրորդ հատիկը, որ  
պարարտ հողի վրայ ընկաւ, առատ պտուղ տուեց:  
Այս տարբեր արդիւնքների պատճառը հողն է և ոչ  
թէ սերմը. նոյնն է և Աստուծոյ արքայութիւնն  
ու նրա սերմը:

Մի քանի տասնեակ տարիներ առաջ Եզիպտո-  
սի բուրդերից մէկի մէջ գտան փարաւոններից մէկի  
մումիան: Այն օթեանում, որտեղ հանդուում էր եր-  
բեմն Եզիպտոսի հզօր միապետի դիակը, գտան նաև  
շատ հին եզիպտական կահ կարասիկ, և ի միջի այ-  
լոց մի աման ցորեն: Պապիրուսի վրայ դրած յիշա-  
տակարանից երևում էր, որ ցորենը մնացել էր այդ

տեղ մօտ երեք հազար. տարի. երբ նրան ցանեցին, նա  
պտուղ տուեց:

Աստուծոյ արքայութեան սերմը, ճշմարտու-  
թեան սերմը աւելի ևս կենսունակ է. նա ուշ թէ  
կանուխ առատ պտուղ կը մտտակարարէ մարդկանց  
սրտերին. հարկաւոր է միայն որ մարդոց սիրտը  
պատրաստ լինի այդ հատիկն ընդունելու, և նրա  
ներքին աշխարհը, նրա հակուձեները պատրաստ հող  
ունենան Գրիստոսի սերմի բարգաւաճման համար:

Ճշմարիտ է, կան մարդիկ որոնք անընդունակ  
են բոլորովին Աստուծոյ արքայութիւնը մտնելու.  
Նրանց համար դոյութիւն չունի պայծառ գաղա-  
փարներ ռ բարձր ձգտումների աշխարհը. այսպի-  
սիների համար է ասում Յիսուս. «Մի տաք սրը-  
բութիւնը շներին և մի ձգէք ձեր մարգարիտը խո-  
ղերի առաջ» (Մատթ. է. 6.): Բայց այսպիսի բա-  
րոյական հրէշների տեղը սակաւ է. այդպիսիները  
ոչ թէ ընդհանուր երևոյթ են կազմում, այլ տխուր  
բացարութիւն, ինչպէս նաև կաղերը, հրէշները և  
այլն:

Իսկ առհասարակ մարդիկ միատեսակ են և  
օժտուած միակերպ ձիրքերով ու յատկութիւննե-  
րով: Թէև ժամանակ առ ժամանակ նրանք արտա-  
յայտում են իրանց բնութեան կոպիտ ու ցած կող  
մերը, բայց շատ անգամ ցոյց են տալիս նաև հոգու  
կատարեալ վսեմութիւն: Շատ անգամ պատահում է,

կատարեալ չարագործների ու բարոյապէս անարգուածների կեանքում լինում են դէպքեր, որ իրանց բարոյական գեղեցկութեամբ դժայլեցնում են մ.զ. և հարկադրում լրջօրէն մտածելու:

Ի հարկէ մարդկութեան մեծամասնութիւնը մինչև այժմս էլ հեռու է Աստուծոյ արքայութիւնից և հարկաւոր են ծշակներ, որ Քրիստոսի վարդապետութեան ողբով լցուած՝ ոգևորեն նաև մարդկութեան այդ զանգուածը և հասկացնեն նրանց աւետարանական կեանքի երանութիւնը: Աստուծոյ արքայութեան հիմքը զրուած է, բայց շատ մարդիկ նրան չեն տեսնում, բռնիկէտե աչքերը փակուած են խաբերացութեան, բռնութեան և եսասիրութեան թանձր քողով:

Թող անձնանուէր ու անաչառ սիրոյ արեգակը նրանց աչքերից խաւարը փարատէ. թող քրիստոնեաների կեանքը դառնայ աւետարանի ճշմարտութեան հրաշալի դաղափարի ոգևորիչ պատկերացնումն. թող նրանց կեանքի օրինակով մեղմանան խստասիրաների սրտերը և նրանց հետևեն, ինչպէս որ շատ անգամ ճանապարհորդների պատմութիւնները սքանչելի երկիրների, նրանց լեռների, անեղծովերի, օղի բարեխառնութեան մասին ոգևորում են յաճախ և անտարբեր մարդկանց:

Աստուծոյ արքայութեան հաստատութեան համար հարկաւոր եղած աշխատանքը անհրաժեշտ

է մանաւանդ այն պատճառով, որ կան մարդիկ, որոնք Աւետարանի ուսուցած Աստուծոյ արքայութիւնից դուրս՝ աշխատում են մարդկութեան համար ստեղծել ոսկէ դար, ընդհանուր բարօրութիւն և բաւականութիւն, և կարծում են այդ նպատակին հասնել հասարակական կեանքի փոփոխութեամբ, կամ խաղաղ օրէնսդրական միջոցներով և կամ բռնի յեղափոխական գործողութիւններով:

Սյս կարծիքի կողմնակիցները պնդում են, որ բաւական է միայն մարդու կեանքը ղեկավարող օրէնքները նորոգել, որ հասարակութիւնը վերափոխուի և նոր անտեսական ու քաղաքական կազմակերպութիւն ստանայ: Մարդիկ ինքն ըստ ինքեան կը վերածնուին և քաղաքացիական բարօրութիւնից առաջ կը դայ նաև բարոյական կատարելութիւն:

Նրանց կարծիքով ոչ թէ մարդս իւր բարոյական անձնաւորութեամբ որոշ սահմանների մէջ է զնում շրջապատող կեանքը, այլ կեանքի արտաքին պայմանները, այսինքն՝ քաղաքական իրաւունքները, անտեսական յարաբերութիւնները և այլն որոշ ափսոսանք են ստեղծում քաղաքակիցների մէջ: Նրանց կարծիքով մարդիկ է ծնէ շատ քիչ են զանազանփում. նրանց տարբեր յատկութիւնները առաջ են գալիս կրթութեան ու կեանքի պայմանների ազդեցութեան տակ: Իսկ մարդկային բնածին յատ-

կութիւնների զանազանութիւնն այնքան մեծ չէ, ինչպէս կարծում ենք:

Պարագմունքների ընտրութիւնը ոչ այնքան կախումն ունի բնական ձեւերէրից, որքան կրթութիւնից և շրջապատող պայմաններից. իսկ բնական տեսակէտից խորախորհուրդ փելիստոփայի ու հասարակ բեռնակրի մէջ իսկապէս զանազանութիւնը շատ չնչին է: Եթէ բոլոր մարդիկ մանկութիւնից սնուին ու կրթուին միևնոյն շրջափայրի մէջ, նրանք կը դառնան ընտրեալ փոքրամասնութեան նման:

Ժամանակակից հասարակական կեանքում իրաւունքներն ու պարտականութիւնները անհաւասար են բաժանուած. կան մարդիկ որ ծանրաբեռնուած են զանազան պարտականութիւններով և համարեա իրաւունքներից զրկուած են. ոմանք էլ ամէն տեսակ իրաւունքներ ու սրտօնութիւններ ունին, իսկ պարտականութիւն—ամենեկին: Առաջինների համար կեանքը զթառատ մայր է, իսկ վերջինների համար—չարասիրտ խորթ մայր:

Այս հանդամանքը ի հարկէ զրկուածների սըրտում տրտունջ ու անբաւականութիւն է առաջ բերում. նրանք սկսում են նախանձել, բոլոր ուժով աշխատել, որ ձեռք բերեն զոնէ մի քիչ այն իրաւունքներից, որոնցով օգտւում են ճակատագրի ընտրեալները: Իրանց ձգտումը իրագործելու համար՝ նրանք զիմում են շատ անգամ ոճիրների, ուստի և

մարդկութեան մեծ մասը՝ քաղաքացիական անկատար կազմակերպութեան շնորհիւ ապականվում է: Կեանքը ինքը ոճրագործ է ստեղծում:

Ի հարկէ այս երևոյթը տեղի չէր ունենայ, եթէ հասարակութիւնը երկու մասի բաժանուած չլինէր—անգործ հարստահարիչների և հարստահարուած մշակների: Թող մարդիկ միշտ ունենան ապահովուած հայր կտոր, թող միապէս մասնակցեն կեանքի թէ աշխատանքին և թէ խրախմանութիւններին, և այն ժամանակ կը վերանան սպանութիւններն ու կողոպտումները, կանհետանայ նախանձն ու ագահութիւնը, կը ախրէ ընդհանուր հաւասարութիւն ու եղբայրութիւն և ոսկէ դարը կը հասնի:

Իսկ այս բոլորը, ինչպէս քարոզում են այս վարդապետութեան առաքեալները, կարող է այն ժամանակ միայն իրագործուել, երբ վերջանայ այն մեծ չարիքը, որից ծնվում է մարդկային անհաւասարութիւնը—այն է՝ մասնաւոր սեպհականութիւնը. երբ չլինին առանձին դրամատէրեր ու ձեռնարկողներ, այլ արդիւնաբերութիւնը ամբողջովին կեղրոնացած լինի հասարակութեան կամ տէրութեան ձեռքում, որ հաւասարապէս բաժանում է անհասանելի մէջ թէ աշխատանքը և թէ արդիւնքը: Աշխատանքը կը բաղմապատկուի, որովհետև ամէնքը պէտք է աշխատեն, և դրա համեմատ կաւելանայ նաև բարօրութիւնը. և ոչ թէ միայն առանձին անհասանելիք՝

այլ և ամէն մի մարդ միջոց կունենայ կեանքի բարեքնեքից օգտուելու: Պահանջելով ամէն մէկից իւր ընդունակութեան համեմատ՝ հասարակութիւնը կարող կը լինի իւրաքանչիւրի կարօտութիւնը լցնել:

Այս հայեացքը շատ հին է, և նրան հետևողների շարքում գտնվում են զանազան ժամանակների ու կրթութեամբ ազգերի իմաստուններ: Յոյն փիլիսոփայ Պլատոնը, անդլիայի պետական գործիչ Թոմաս Մօլը, իտալացի դիտնական արեղայ Կամբանէլյան և այլ բազմաթիւ Ֆրանսիացի, գերմանացի, ամերիկացի բազաբական գործիչներ ու մատենադիրներ մանրամասնօրէն մշակել են մարդկութեան վերածնութեան յատակադիծը՝ հիմնուելով հասարակական կեանքի փոփոխութեան վրայ:

Մասնաւորապէս այդ հեղինակներից իւրաքանչիւրն ունի իւր յատկանիշ կողմերը, բայց ընդհանրապէս նրանք բոլորը այն եզրակացութեան են գալիս, թէ հարկաւոր է ամբողջ ժողովուրդը աշխատանքի բանակ դարձնել, իսկ միակ տէրն ու կարգադրիչը լինի տէրութիւնը: Նա պիտի լինի նաև քաղաքացիների ընտանեկան և մինչև անդամ անձնական կեանքի լիակատար կարգադրիչը ու բարեկարգիչը: Տէրութիւնը իւրաքանչիւր մարդու համար որոշում է պարապմունք, տալիս է նրան բնակութեան տեղ, կրթում է նրա երեխաներին և մինչև անդամ իւր ուղածի պէս է ամուսնացնում:

Մի խօսքով՝ անձնաւորութիւնը բոլորովին անհետանում է, հասարակութիւնը նրան բոլորովին ոչնչացնում է:

Բայց այդ գաղափարական կազմութեան յատակադիծը այն ժամանակ միայն հաստատուն կարող է լինել, եթէ երևակայենք, որ ամէն մի անհատ ամենայն բարեխղճութեամբ կը կատարէ տէրութեան իւր վրայ զրած պարտականութիւնները. բայց եթէ թոյլ տանք, ինչպէս որ հաւանական է, որ քաղաքացիների մեծ մասը՝ չզգալով իւր վրայ կարօտութեան լուծը կամ վերակացուի խարազանը՝ սկսի փախչել իւր պարտականութիւններից և շահայ որքան կարելի է քիչ աշխատել, այն ժամանակ այդ արուեստական շինուածքը իսկոյն կը խորտակուի: Իրականութիւնը պարզ ցոյց տուեց, որ իսկապէս այդպիսի հիմքերի վրայ դրուած հասարակութիւնները խորտակվում են թղթից շինած տնակների նման:

Ղերբոն՝ «Ազգերի ու ամբօխի հողեբանութեան» հեղինակը՝ ասում է. «միայն մութ ամբօխի զլխում և մի քանի ֆանատիկոսների նեղ մտածողութեան մէջ կարող է դեռ գոյութիւն ունենալ այն կարծիքը, թէ հրահանգների միջոցով կարելի է հասարակական փոփոխութիւններ առաջ բերել:

Հրահանգների միակ օգտակար դերն այն է, որ արբազործում են այն փոփոխութիւնները, որոնք

ինքն ըստ ինքեան ընդունուած են ժողովրդի մէջ  
 և հասարակական կարծիքով հաստատուած: Նրանք  
 հետեւում են այդ փոփոխութիւններին, այլ ոչ թէ  
 առաջնորդում են նրանց: Հրահանգներով մարդկանց  
 բնաւորութիւնն ու գաղափարները փոխել անկարե-  
 լի է. ժողովուրդը չի կարող հրաժարուել այն հայեաց-  
 քից, որ նրա հոգու սարքից է բխում» . նրա սիր-  
 արն է միայն բոլոր գործունէութեան աղբիւրը:

Ժողովրդի կեանքի կարգադրիչ սկզբունքը նրա  
 բարոյական բնաւորութիւնն է: Հասարակական կա-  
 տարեալ կազմակերպութիւն կարող են ստեղծել  
 միայն բարոյապէս կատարեալ մարդիկ:

Գործք Առաքելոցի մէջ կարդում ենք. «հաւա-  
 տացեալների բազմութեան սիրար և հողին մէկ էր.  
 ոչ ոք չէր ասում իր ապրանքի համար թէ իրանն  
 է, այլ նրանց համար ամէն բան հասարակաց էր...  
 նրանց մէջ ոչ ոք կարօտութիւն չունէր, փասն զի  
 նրանք որ ագարակների կամ տներէ տէր էին, ծա-  
 խում էին և ծախուածի զինք բերում էին. առա-  
 քեալների ոտների մօտ էին դնում, և ամէն մէկին  
 արվում էր, ինչ պէտք որ ունենում էր» (Գ. 32 — 36)  
 Ո՛րքան հեռու է մեր ժամանակակից կրթուած հա-  
 սարակութիւնը, որ քաղաքացիական իմաստութեան  
 վերջին խօսքն է ներկայացնում, այն առաջին քրիս-  
 տոնեական համայնքից, որ հիմնուած էր գալիլիացի  
 ձկնորսների և հրէաստանի զեղջուկների ձեռքով:

Կառավարութեան ձեւերը փոխվում են, դուրս  
 են գալիս նոր նոր անտեսական ու քաղաքական տե-  
 սութիւններ. բայց գոյութեան զիշատիչ մաքառումը  
 չի կորսնցնում իւր սուր կերպարանքը, մարդ մար-  
 դու համար գազան է հանդիսանում: Այսպէս եղել  
 է և պիտի լինի, մինչև որ մարդու կոպիտ հակում-  
 ները տեղի չտան ընդհանուր սիրոյ խաղաղարար  
 հեղութեան բարձր գաղափարներին, մինչև որ մար-  
 դու միջից չհանուի գազանի սիրար և չպայծառա-  
 նայ նրա մէջ Աստուծոյ նսեմացած պատկերը:  
 «Եղէք կատարեալ, ինչպէս որ ձեր Երկնաւոր հայրը  
 կատարեալ է» ասում էր Յիսուս, և դուք կատա-  
 րեալ կեանք կունենաք:

Աւետարանը՝ այսպէս որոշելով մարդկութեան  
 ապագան կատարելագործելու միջոցները, մարդկանց  
 շահերի զխաւոր կեդրոնը համարում է ոչ թէ նիւ-  
 թական, արտաքին, այլ բարոյական, հոգեկան աշ-  
 խարհը: Այն մարդիկը, որոնք ուզում են կատարեալ  
 կեանք ունենալ, պէտք է աշխատեն պարզել, իւ-  
 բացնել և խոստովանել ճշմարտութիւնը և Աստու-  
 ծոյ արքայութիւնը հաստատել իրանց և մերձա-  
 ւորների մէջ:

«Խնդրեցէք (որոնեցէք) նախ և առաջ Աստու-  
 ծոյ արքայութիւնն ու նրա արդարութիւնը (Մատթ.  
 2. 33), ասում է Յիսուս, և քննակալը կը տրուի  
 Ձեզ»:

Աւետարանը չի ասում խնդրեցէք միայն Աստուծոյ արքայութիւնը, այլ ասում է, խնդրեցէք նախ և առաջ: Ուրեմն Աստուծոյ արքայութեան հոգւերը, ձգտումն դէպի ճշմարտութիւն մեր իմացականութեան մէջ պէտք է առաջին տեղը բռնեն. բայց այդ չի նշանակում, թէ մարդ իրաւունք չունի իւր մարմնական կարիքներն ու պահանջներն էլ հոգալու: Փրկչի վարդապետութեան համեմատ՝ նիւթական բարիքներից օգտուելը և նրանցով զուարճանալը դեռ չի համարվում անպայման անբարոյական բան: Անբարոյականութիւն է համարվում, երբ մարդ իւր բոլոր զգացմունքներն ու մտածողութիւնը բացառապէս դէպի նիւթականն է ուղղում: Թէև Աւետարանը ասում է, որ մարդս հացով միայն չի ապրում, բայց նա սովորեցնում է մեզ նաև աղօթել «զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր» (Ղուկ. Ժա):

Մարմնական պահանջները պէտք է բաւականութիւն դանեն, բայց չը պէտք է չափից անցնեն, մանաւանդ աւելորդ ցանկութիւնները պահանջ չը պէտք է դառնան: Դեռ Սոկրատը ասում էր. «Մարդ պէտք է ուտի, որպէս զի ապրի». իսկ մարդիկ շատ անգամ միայն ուտելու համար ուրախութեամբ կապրէին: Մարդիկ չեն բաւական, որ կերակուրը սննդաբար լինի, այլ պահանջում են, որ նաև համեղ լինի: Ուտտի պահանջը բարդուում է, աւելանում

են ցանկութիւններ, որոնք վերջապէս բոլոր հոգեկան ուժերը դերում են և մարդու անասնի աստիճանին են հասցնում՝ դարձնելով անտարբեր իւր մերձաւորի կարօտութեան ու տառապանքներին:

Ոստրէներ ու նուրբ կարկանդակներ ուտելը, տեսակ տեսակ թանկագին ըմպելիքներ խմելը՝ երբ մօտդ սովից տանջվում են, նոյնպէս ցած ու ամօթալի երևոյթ է ինչպէս որ եթէ մէկը հրդեհի ժամանակ պարել սկսէր, կամ հիւանդի մահճակալի մօտ կերուխում սարքէր:

Նոյնը տեսնում ենք և բնակարանի, զգեստի և այլ իրերի վերաբերմամբ: Բնակարանն ու զգեստը, որ անհրաժեշտ են մեր մարմնը տարերքների վնասակար ազդեցութիւնից պահպանելու համար, փառասիրութիւն յադեցնելու միջոց են դառնում:

Բաւական: չը լինելով ծարաւը յադեցնող խմիչքներով՝ մարդ անձայր ստեղծում է զանազան տեսակ նոր նոր գինիներ: զարեջրեր, սիդրներ և լիկէօրներ, որ արդէն գործ է ածում ոչ թէ ծարաւը յադեցնելու համար: Պիտոյքը այստեղ էլ ծայրահեղութեան է հասել, իսկ ծայրահեղութիւնը դառնում է անողոք բռնակալ, որին զոհ են դնում հոգու ամենալաւ ձգտումները:

Սյդ բոլոր ծայրահեղութիւնները ընդարձակուելով մարդու սիրտն են լցնում իրանց ամօթալի ու կոպիտ հաիւումներով, աեղ չեն տալիս նրա բարձր

ու սուրբ զգացմունքներին և նրան զազան են զարձ-  
նում: Աւետարանը այս ամէնից զգուշացնում է և  
համոզում մեզ հրոզալ, թէ ինչ պիտի ուտենք, կամ  
ինչ պիտի խմենք, կամ ինչ պիտի հագնենք, որով-  
հետև այդ ամէնը հեթանոսներն են խնդրում (Մատթ.  
2. 31):

Միայն հեթանոսները, այսինքն՝ կոշտ սիրա և  
բթացած բարոյական զգացմունք ունեցողները կա-  
րող են միայն նիւթական հոգսերով շատանալ, իրանց  
միակ նպատակը այդ համարել և նրան միայն ծա-  
ռայել: Աստուծոյ արքայութեան զաւակների հա-  
մար ամբողջ արտաքին աշխարհը իւր բոլոր նիւ-  
թական բարիքներով մի միջոց է միայն աւելի բարձր  
նպատակի հասնելու: Նրանց բոլոր միտքը, յոյսը,  
սէրն ու աշխատանքը ուղղուած պէտք է լինի նախ  
և առաջ և զլիսաւորապէս Աստուծոյ արքայութեան,  
նրա հաստատութեան: Իսկ նիւթական բարիքներն  
ու հաճոյքները, եթէ մարմնի անհրաժեշտ պիտոյք-  
ները բաւականացած են, Աւետարանին հետևողների  
համար էական նշանակութիւն չունեն:

Աւետարանը կոչելով մարդուն բարձրագոյն նպա-  
տակների ծառայելու՝ ուղղում է մեզ նիւթական աշ-  
խարհից բարձրացնել, բայց ոչ մի տեղ չի հրամայում  
արհամարհել նրան և նրանից օգտուելը յանցանք  
չի համարում: Նա որ խօսում է դաշտում բուսնող  
շուշանի գեղեցկութեան մասին, որ հոգեկան վրշ-

տերի ժամին հեռանում է Գեթսեմանու մայրերի ու  
ձիթենիների տակ և այստեղ ծաղիկների բուրմուն-  
քի մէջ, հեղազեղ լուսնի փայլի տակ աղօթում է,  
չի կարող մեղ ևս արգելել բնութեան հաճոյքը վայե-  
լի: Նա չի դատապարտում նաև խելացի կերպով  
բնութեան բարիքներից օգտուել, քանի որ ինքը թոյլ  
է տալիս ապաշխարող կնոջ թանկազին իւզով իւր  
ոտներն օծել, և աւելացնում է. «պիտի յիշատակուի  
նաև այն, ինչ որ նա գործեց» (Մարկ. 14. 9):

Այստեղից երևում է, որ Աւետարանը մար-  
դուն չի հրաժարեցնում կեանքից, այլ գերադասել է  
տալիս հոգեկանը մարմնականին: Եթէ Աւետարանը  
ուղիղ հասկանանք, կը համոզուենք որ փիլիսոփայա-  
կան ու կրօնական վարդապետութիւնների մէջ քրիս-  
տոնէութիւնից աւելի պայծառ, զուարթ ու կենս-  
ուրախ աշխարհահայեցողութիւն չկայ: Քրիստոսի  
վարդապետութիւնը նրանով է սկսվում, որ բոլոր  
տառապեալներին ու ծանրաբեռնուածներին լիակա-  
տար ուրախութեան է կոչում և նրանով էլ վերջա-  
նում է:

Իւր երեքամեայ քարոզութեան հաշիւը տես-  
նելով՝ Յիսուս ասում է իւր աշակերտներին. «Այս  
ամէնը ես ասացի ձեզ, որ իմ ուրախութիւնը ձեր  
մէջ մնայ, և ձեր ուրախութիւնը լցուած լինի»  
(Յովհ. 12. 12):

Թէ և Աւետարանում շատ յաճախ խօսվում է

խաչի, չարչարանքների մասին, որ քրիստոնեաները պէտք է տանեն, բայց այդ ամէնը Աստուծոյ արքայութեան յատկութիւնները չեն, այլ չարիքին դիմադրելու հետեանք: Պօղոս առաքեալը Կորնթացւոց դրում է. «Ձեր մէջ տարաձայնութիւններ պէտք է պատահին» (Ս. Թուղթ. Ժա. 19), բայց այդ չի նշանակում, որ Պօղոս առաքեալը այստեղ խօսում է ցանկալի իրողութեան, այլ ցաւալի անհրաժեշտութեան մասին:

Ճշմարտութեան ճանապարհը դժուար է. նա սխալներով ու մոլորութիւններով է պատած. վեճեր ու տարաձայնութիւններ անխուսափելի են: Նոյն է և Աստուծոյ արքայութեան ճանապարհը: Չարութիւնը հղօր է և առանց պատերազմի տեղի չի տալիս: Սիրոյ ու ճշմարտութեան ղինուորների դէմ նա դուրս կը հանէ դժոխքի բոլոր ուժերը: Միզիբական ու բարոյական տանջանքներ ի հարկէ անխուսափելի են, ուստի և սրանց մասին Յիսուս հարկ է համարում յիշատակել:

«Ինձ հալածում էին, ասում է նա, պիտի հալածեն և ձեզ»: բայց այդ հալածանքները չը պէտք է մռայլեն պայծառ յոյսերը, որովհետեւ սկսուած գործը չեն կարող բնդհատել, Աստուծոյ արքայութեան շինութիւնը չեն կարող դադարեցնել: Ինչպէս որ զիշերուայ խաւարը փարատվում է արևի ճառագայթներով, այնպէս և չարութիւնը բարութեան յարձակումով:

գայթններից, այնպէս և չարութիւնը բարութեան ոյժի առաջ անհետանում է:

Ճահիճների գոլորշիները, վառուող յարդի ծուխը կարող են մի առ ժամանակ պայծառ արևը ծածկել. բայց կը դայ քամին, կը դուռէ ծուխը և երկինքը դարձեալ կը փայլի իւր յաւիտենական զեղեցկութեամբ:

Փարիսեցիները, բռնակալներն ու ստախօսները Յիսուսին Գողգոթայի վրայ խաչեցին, նրա զերեզմանի վրայ ծանր քար դրին, կնքեցին, պահապաններ դրին և չար հրձուանքով իրանց յաղթող կարծեցին: Բայց Քրիստոս յարեաւ ի մեռելոց, և նրա հետ ճշմարտութիւնը ու բարութիւնն էլ վերածնունեցան: Չկայ մի ուժ, որ ճշմարտութեան յաղթէ, մի արդեւք՝ որ կարողանայ առ միշտ կանգնեցնել յաղթահարող սիրոյ հանդիսաւոր զնայքը:

Միթէ կարո՞ղ է աւելի պայծառ ու բերկրալի բան լինել, քան թէ այն համոզմունքը, թէ սերն ու ճշմարտութիւնը վերջապէս յաղթող պէտք է հանդիսանան:

Մարդիկ այս հաւատով հրձուած՝ ուրախ սրբատով կը նային մահուան վրայ, ուրախութեամբ կը բարձրանան խարոյկների վրայ, և զահիճներին դառնալով կասեն. «Աւելի լաւ է տանջուել անմեղների հետ քան թէ մեղաւորների հետ զուարճանալ»: Իրանց անձնական անյաջողութիւնների մէջ նրանք

կը մխիթարուեն այդ սիրոյ յաղթանակի համոզմունքսով, Նայեցէք բրիստոնէական հին զեանափոր գերեզմաններին. այնտեղ հանգչում են հազարաւոր մարտիրոսների նշխարներ, որոնք գիշատուած են զազաններից, խարոյկների վրայ պրուած, անտանելի տանջանքների մէջ մեռած, և կը տեսնէք, որ գերեզմանաքարերի շատերի վրայ և ոչ մի ակնարկ անգամ կ'այ նրանց կեանքի դառնութեան մասին, նրանց վարհուրելի մահուան մանրամասնութիւնների մասին: Այլ կը տեսնենք հեղ աղաւնիներ, բարի հովիւ, ոչխար, շուշան, ողկոյզ և այլն. ահա այն պայծառ ու խաղաղարար նկարները, որ նրանց գերեզմանների վրայ դժագրուած են: Այդ մարտիրոսների շիրիմների տակ անգամ ուրախութեան ու սիրոյ յաղթանակի մեղեդին աւելի բարձր է լսվում, քան թէ տխուր հեկեկանքները:

Գրիստոնեան տեսնելով աւետարանական օրուայ արշալոյսը, որ բացվում է աշխարհի վրայ, իւր ցաւերն ու վշտերը մոռանում է: Նա զիտէ, որ Աստուծոյ արքայութեան շինութեան համար հարկաւոր է ոյժ, մեծ աշխատանք և շատ զոհաբերութիւններ, և միայն նրանք, որ աշխատանք են կրում, Աստուծոյ արքայութիւնն են ստանում: Այսպիսի ակնկալութեամբ նրանք չեն վախենում մաքառումից և իրանց անձնական տառապանքները արհամարհում են:

Իրանց թափած արեան ու արտասուքի գնով շինում են Աստուծոյ արքայութիւնը, և այդ հարիւրապատիկ մխիթարում է նրանց:

Երբ որ սէրը և Գրիստոսի ճշմարտութիւնը աշխարհումս լինին ոչ իբրև պատահական հիւրեր, և նրան մշտական լուսով պայծառացնեն, հիմնական օրէնք, մշտապէս մղող ոյժ դառնան, այն ժամանակ պայծառ ուրախութեան անմուտ արեգակը կը փայլի աշխարհիս վրայ, և մարդու սիրտը Աստուծոյ արքայութիւն կը դառնայ:

Տէր, եկեսցէ արքայութիւն քո:



4088

